№ 42 ՇԱԲԱԹ ԱՊՐԻԼԻ 15 1895 ՇԱԲԱԹ ԱՊՐԻԼԻ 15 № 42

ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տէր-Սարգիս քահանայ, Բոգդան Եգօրովիչ և Սօֆիա Արտեմիեվնա Տէր-Սարգիսեանները սրտի ցաւով յայտնում են ազգականներին և ծանօթներին առաջինը իր սիրելի եղբօր, երկրորդը իր հօր, և երրորդը իր սկեսրայր

ԵԳՕՐ ԲՕԳԴԱՆՕՎԻՉ ՏԷՐ-ՍԱՐԳԻՍԵԱՆԻ

մահվան մասին, որ տեղի ունեցաւ Թէլաւ քաղաքում, ապրիլի 12-ին: Թաղումը կը լինի կիրակի, ապրիլի 16-ին, Թէլաւ քաղաքում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինքնավարութիւն գաւառական քաղաքների համար. Քննիչ յանձնաժողով. Անգլիական լրագիրների կարծիքը Կիմբերլէյի պատասխանի մասին. Սասունցիները Լօնդօնում և նրանց ներկայանալը Գլադստօնին. Հայոց հարցը և եւրօպական մամուլը. Զարլզ Ֆիցջերալդ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Իշխանուհի Բարբաբէ Ջօրջաձէ. Այտընեանի յիսնամեայ յօբելեանը և արհեստագիտական դպրոց. Թիֆլիսի առևտրական-տնտեսական ոստիկանութիւնը. Նամակ Բագուից. Նամակ Ղզլարից. Նամակ Խաչագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւրքիայից. Նամակ Թիւրքիայից. Մատնութիւն տպագրական խօսքի դէմ. Ֆրանսիական մամուլը. Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ. — ՅԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Թիւրքաց Հայաստանում:

ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԳԱՒԱՌԱԿԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Շուտով մեր գաւառական քաղաքները կը ստանան ինքնավարութիւն կամ լիակատար ձևով, կամ կրճատված կազմութեամբ: Այդ մասին ներքին գործերի ministրութիւնը արդէն ներկայացրել է վերջնականապէս ձևակերպված մի ծրագիր՝ պետական խորհրդի հաստատութեան: Մեր գաւառական քաղաքներից՝ Գանձակ, Շուշի և Ալէքսանդրապօլ քաղաքներում կը մտցնվի քաղաքային ինքնավարութիւնը այն ձևով, ինչպէս, օրինակ, նա գործադրվում է Թիֆլիսում, Բագվում, Երևանում, Քութայիսում:

Այդպիսով այդ քաղաքների ազգաբնակութիւնը միջոց կունենայ իր ձեռքն առնել քաղաքի գործերի ղեկավարութիւնը, քաղաքային տուրքերը նպատակայարմար բաժանել և հաւաքել, զանազան հասարակական հիմնարկութիւններ հաստատել, Ջրանցքներ շինել, քաղաքը լուսաւորել, դպրոցներ, արհեստանոցներ, հիւանդանոցներ բանալ, այգիներ և ծառաստաններ հիմնարկել, բազմացնել և այլն և այլն:

Մի խօսքով, քաղաքի ժողովրդի ինքնագործութեան, ինքնօգնութեան համար բացվում է մի նոր ասպարէզ, նրա ձեռքը տրվում է գործելու կարևոր մի միջոց:

Եւրօպական Ռուսաստանում մտցրված է տեղական ինքնավարութիւն ոչ միայն քաղաքներում, այլ և ամբողջ նահանգների և գաւառների շրջաններում՝ զեմստվօ անունով, որ ղեկավարում է այդ շրջանների վարչական և տնտեսական կեանքի մի նշանաւոր մասը: Կառավարութիւնը մտցրել է տեղական ինքնավարութիւն այդ տեղերում, համոզվելով, որ գաւառական ժողովուրդը ընդունակ է վերահասու լինել տեղական պահանջներին և խելացի կերպով վարել նրան յանձնված գործերը:

Մեր երկրում կառավարութիւնը առայժմ հնարաւոր է գտնում լայն կերպով տարածել ինքնավարութիւնը Անդրկովկասի բոլոր փոքր ի շատէ բազմամարդ կէտերում, մինչև անգամ Օրդուբաթի նման յետ ընկած մի տեղում:

Մեր գաւառական հասարակութեան վրա մեծ պարտականութիւն կայ լուրջ և անձնուիրաբար վերաբերվել դէպի մեզ տուած ինքնավարութիւնը և ապացուցանել, որ մենք ընդունակ ենք նրան գործադրելու արդիւնաւէտ կերպով և որ կառավարութիւնը կարող է մեր երկրի ազգաբնակութեանը հաւասար տնտեսական և ներքին վարչական այնպիսի գործեր, ուր պահանջվում է տեղական հանգամանքների և պայմանների մէջ գործելու հմտութիւն և ընդունակութիւն:

Իսկ եթէ անկարող կը լինենք այժմեան մեզ տուած իրաւունքներից օգտվել խելացի կերպով, դրանով մենք արդէլք կը հանդիսանանք և այն բարեփոխութիւնների իրագործման, որոնք պէտք է ասպարէզ գան, իբրև զարգացում և ճիւղաւորութիւն ներկայ քաղաքային ինքնավարութեան:

ՔՆՆԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

Լօնդօնի „Daily Telegraph“ լրագիրը հետևեալ հեռագիրն է ստացել իր սեփական թղթակցից, Բիթլիսից, via Կարս:

„Թիւրք կառավարութիւնը սիստեմատիկաբար ջանքեր է գործ դնում անհետացնելու Սասունի կոտորածին վերաբերեալ բոլոր ապացոյցները: Ահա մի նոր ապացոյց:

„Մարտի 15-ին, չորս բանտարկեալներ—երեք հասակաւոր մարդիկ և մի տղայ Մուշից բերվեցին Բիթլիս: Նրանք բոլորը Սասունի գաւառի Աղբիկ գիւղի բնակիչներ էին:

„Նրանց յանցանքն այն է, որ միասին աշխատում էին Մուշում ապացոյցներ հայթայթելու քննիչ յանձնաժողովին և մի բողոքագիր էին ներկայացրել քննիչներին: Երեքը ձերբակալվեցին. չորրորդը, որովհետև հաղնված չէր ինչպէս սասունցի և որի մօտ էր բողոքագիրը, փախաւ: Նա կարողացաւ յաղթել ամենալուրջ դժուարութիւններին և ներկայացնել գոկումենտը պատուիրակներին, բայց դրանից յետոյ անմիջապէս ձերբակալվեց և գցվեց Մուշի բանտը: Այդտեղից իր ընկերների հետ փոխադրվեց Բիթլիսի բանտը: Այդ բանը վախեցրեց շատ վկաների, որոնք պատրաստվել էին ցուցմունքներ անել:

„Ես լսեցի, որ շատ քիւրդ պեռեր և օֆիցէրներ կամենում են ներկայանալ քննիչ յանձնաժողովին և ցոյց տալ, որ իրանք կառավարութեան հրամանով են մասնակցել Սասունի կոտորածին, եթէ միայն հիւպատոսները կերաշխաւորեն նրանց համար կեանքի մշտական ապահովութիւն, որովհետև վախ ունեն սպանվելու:

„Սասունի գիւղացիներից մինը վերադարձել էր Սասուն և սկսել էր ապրել Գէլիէգուզան գիւղում, բայց ուտելիքի պակասութիւնից սովամահ էր եղել:

„Հարկերը ոչ թէ առաջուց են հաւաքում և երեք ժամանակամիջոցում, բայց պաշտօնապէս հրամայված է հաւաքել կանխիկ, այն ևս հինգ տարվանը միասին: Ազգաբնակութիւնը անկարող լինելով այդ ծանրութիւնը տանել, թողնում փախչում է երկրից:

„Բիթլիսում կոտորածի մեծ երկիւղ կար, բայց շնորհիւ այժմեան վալի Օմէր-բէյի ձեռք առած ազդեցիկ միջոցների՝ խաղաղութիւնը չը խանգարվեց: Մի քանի նշանաւոր հայեր, որոնք ամբաստանվում են, թէ հաղորդակցութիւն են ունեցել բրիտանական հիւպատոս Հօլմարդի հետ, դեռ գտնվում են բանտում: Մարտի 17-ին մի պատգամաւորութիւն ներկայացաւ վալիին, միջնորդելով նրանց ազատութեան մասին, բայց մերժում ստացաւ և այդ մերժումը բացատրեց նրանով, որ նախկին վալի Թահսին-փաշան մեծ ազդեցութիւն ունի կ. Պոլսում: Վալին միայն այնքանը խոստացաւ, որ եթէ բանտարկեալները դատապարտվեն, նա ձեռք կը բերի նրանց համար կայսերական ներում“:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԻԻՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(Ակնատեսի տպաւորութիւնները)

VII

Մի շատ կարևոր հարց, որ վերին աստիճանի ճնշում և ծանրաբեռնում է ժողովուրդը,—ամեն վայրկեան բռնվելու, բանտարկվելու երկիւղն է, որ ոչ մէկին հանգիստ չէ տալիս:

Վերջին 10 տարվայ ընթացքում թիւրքաց կառավարութիւնը այնչափ անմեղ մարդիկ է բռնել, բանտարկել, որ ըստ արտաքին երևոյթին այդ երկիւղը բոլորովին էլ անհիմն չէ, որովհետև ով որ ուզում է իր նախանձորդին, թշնամուն կամ նոյն իսկ մրցակցին ճնասել, պատրաստակ է առնում իր ձեռին հայոց quasi—յեղափոխականութիւնը, և զրպարտում, մատնում է նրան:

Իսկ կառավարչական պաշտօնեաների համար նա չափազանց ձեռնտու է այդ, որովհետև հայ բանտարկեալների թիւն աւելցնելով, նրանք երկու օգուտ ունեն. նախ ցոյց տալու համար կենտրօնական կառավարութեան, թէ իրանք աչալուրջ հսկում են հայոց շարժումների վրա, երկրորդ՝ առանց այն էլ անմեղ մարդիկը ազատելու յոյսով կողոպտելու համար:

Տանից աւելի բանտարկեալ վաճառականներ տեսայ ես, որոնք այժմ ազատված էին շնորհիւ իրանց տուած փրկանքի, չը նայելով իրանց կատարեալ անմեղութեան: Մի թիւրք վաճառական՝ զուտ առևտրական խնդիրների առիթով, մի հայի կողմից իրան գրված անձնական կծու նամակի համար նրա հետ թշնամանալով, իր մրցակցից ազատվելու համար մատնել էր այդ հային իբրև յեղափոխական: Այդ հայ վաճառականը բռնվում, բանտարկվում և ուղարկվում է Տրապիզոնի կենտրօնական բանտը: Ամբողջ 13 ամիս բանտ մնալուց յետոյ, դատաստան է տեսնվում, և երբ երևում է, որ բացի վերոյիշեալ անձնական նամակից ուրիշ ոչ մի փաստ չը կայ՝ ազատ է արձակվում: Նոյն վաճառականից՝ իր բանտարկութեան առաջին չաբաթներում կաշառք են ուզում արձակելու. պահանջում են 300 լիրա. իջնում են մինչև 80 լիրայի (700 ռուբլ), բայց վաճառականը չէ տալիս, վստահելով իր անմեղութեան վրա: Եւ երբ ինքն արձակվում է 13 ամսից յետոյ, բնական է իր վնասները՝ պահանջված գումարից էլ աւելի են լինում:

Մի ուրիշ վաճառական, փ. որ լաւ կարողութեան հետ, նաև մեծ կապեր է ունեցել Սամսօնից մինչև Կեսարիա իր ընդարձակ առևտրական գործունէութեամբ, պարբերաբար բանտարկվել և արձակվել է, ամբողջ տարիներ, մինչև որ յաջողել են նրա բովանդակ վաճառականութիւնը քանդել և կարողութիւնը զանազան պատրուակներով կորզել. և հիմա երբ ամեն բանից զրկված, ամեն ինչ կորուցած, աղքատացել է, հիմա ազատ է թողված:

Այսպիսի զրկված և կեղեքված հայերի շարքումն է նաև մի յոյն, Ա—ողլի, Սամսօնում, որի մօտ՝ արտասահմանում հրատարակվող հայերէն թերթեր գտնելով, այնչափ են նեղել, տանջել և կեղեքել ամբողջ տարիներից ի վեր, և առանց դատաստանի, որ խեղճը իր բոլոր հարստութիւնը և գործը կորցնելուց յետոյ, այժմ ստիպված է բոլորովին հեռանալ Սամսօնից և տեղափոխվել Զմիւռնիա:

Դեռ նորերումս, Զարշամպա գիւղից բռնել, տարել էին Տրապիզոն, նոյն գիւղի 2 քահանան և 10 հոգի, բոլորն էլ կապկպած: Գայմագամը քիչով գոհացել, 30 լիրա է միայն ուզել քահանայից նրան ազատելու համար, բայց խեղճ գիւղական քահանան որտեղից կարող էր 300 ռուբլի ունենալ՝ գայմագամին կաշառելու համար, ուստի և ստիպվել է կրել իր չղթան: Եւ դրանք այժմ բանտարկված են Տրապիզոնում:

Չը կայ քաղաք և գիւղ, որ իր բանտարկեալները չունենայ: Շատ անգամ գրված է լրագրութեան մէջ այս բանտարկեալների կրած չարչարանքի մասին: Իմ առած տեղեկութիւններին նայելով, երկրի ներսերում ամեն կերպ մարմնական տանջանք տալիս են, իսկ ծովեղերեայ քաղաքներում, ուր արտաքին աշխարհի հետ յարաբերութիւնն աւելի դիւրին է, բաւականանում են միայն գանակոծելով: Մի կիւրինցի պատմում էր ինձ, թէ Նրան հինգ հարիւր գաւազանից պակաս չեն զարկել, բերանից գաղտնիք դուրս առնելու համար, բայց ոչինչ չեն կարողացել առնել, որովհետև ոչ մի յանցանք չունէր մարդը: Եւ այդ մարդը դատական քննութիւնից յետոյ բոլորովին անմեղ է ճանաչված. իսկ իր կերած 500 գաւազանը: Էհ, թող դեռ ուրախ լինի, որ նրան արձակել են:

Սրանից $1^1/_2$ ամիս առաջ Տրապիզոնի նահանգական դատարանում 17 բանտարկեալի դատաստանն էր տեսնվում. բոլորն էլ մեղադրվում էին իբրև հայ յեղափոխականներ: Դատավարութեան ներկայ էին ռուսաց, անգլիական, իտալական և ֆրանսիական հիւպատոսարանների թարգմանները: Եւ այդտեղ, այս վերջինների ներկայութեամբ, դատարանում ապացուցվել է, որ բանտարկեալներից 5-ը պարբերաբար սարսափելի կերպով գանակոծվելիս են եղել բանտում: Եւ այս 17 հոգուց մէկը՝ 15 տարվայ, երկուսը՝ 10-ական, և երկուսը՝ 5 ական տարվայ բերդարգելութեան են դատապարտվել, իսկ մնացած 12-ը իբրև անպարտ արձակվել. այս վերջինների մէջն են նաև վերոյիշեալ գանակոծվածներից երեքը: Սակայն կալանաւորների հետ գաղտնային վարմունքը եթէ գանակոծութեամբ միայն վերջանար, դեռ փառք էր. սակայն ով կարող է երաշխաւորել, թէ այն խեղճերը, որոնք կամ աքսորման և կամ երկարամեայ բերդարգելութեան են դատապարտված, հասանում են իրանց աքսորավայրը:

Սրանից 2 տարի առաջ Սինոպի առջև մի տաճկական շոգենաւ իր խարիսխը ծովից քաշած ժամանակ երկաթի ծայրին կառչած եօթը դիակ է վեր հանել միմեանց կապկըպած և այդ դիակները թշուառ հայ դատապարտեալների կամ աքսորեալների մարմիններ էին: Շոգենաւը ամենայն հանդարտութեամբ նոյն դիակները դարձեալ ցցել է ծովը և շարունակել ճանապարհը: Այս բանը՝ ինչպէս ինձ պատմեցին, շատերը տեսել են ցամաքից...

Այժմ կուսակալները՝ երևի կ. Պոլսից ստացված հրամանի համաձայն, արձակում են բանտերից երկար ժամանակից ի վեր կալանաւորված անմեղներին, չատ պով: Սեբաստիայի վալին, Սեբաստիայի բանտից 400-ից աւելի մարդ արձակելուց վերջ, բաւական բուն նշանակութեամբ վազել է իր կուսակալութեան միւս քաղաքները, Թո-

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԼՐԱԳԻՐՆԵՐԻ ԿԱՐԾԻՔԸ ԿԻՄԲԷՐԼԷՅԻ ՊԱՏԱՍԽԱՆԻ ՄԱՍԻՆ

II

Մենք անցեալ անգամ առաջ բերինք անգլիական այն լրագիրների կարծիքը, որոնք գոհ են լորդ Կիմբէրլէյի ճառից։ Այս անգամ առաջ ենք բերում մի քանի այնպիսի լրագիրների կարծիքները, որոնք ընդհանրապէս գոհ են մնացել այդ ճառից։

Շեֆֆիլդի «The Sheffild Independant» լրագիրը յայտնում է, որ ինքը գոհ է լորդ Կիմբէրլէյի բացատրութիւններից, որոնցից երևում է, որ անգլիական կառավարութիւնը համակրում է հայոց հարցը պաշտպանողներին, որ կառավարութիւնը մտադիր է դրական քայլեր անել՝ զսպելու Թիւրքաց գաղանութիւնները և որ քաղաքակիրթ Եւրոպայի միւս պետութիւններն էլ համաձիտ են Անգլիայի հետ։

Լօնդօնի «Daily Chronicle» թերթը պարզաբանելով լորդ Կիմբէրլէյի ճառը, նշում է, որ անգլիական պաշտօնական անձանց համար անուրանալի են այժմ, որ հայկական սարսափները տեղի են ունեցել, և որ շատ ուրախալի է եւրոպական երկիրների մէջ տիրող համաձայնութիւնը՝ հայկական ռէֆօրմների անհրաժեշտութեան վերաբերութեամբ։ Մխիթարական է, որ չը շեղվելով Գլադստօնի կառավարութեան աւանդութիւնից, այն է հաշտ և խաղաղ յարաբերութիւններ պահպանել պետութիւնների մէջ, այժմ կարելի է միանդամայն և ներգործական միջազգային գործ կատարել՝ յօգուտ մարդասիրութեան և արդարութեան։

Մանչէստր քաղաքում հրատարակվող «The Manchester Courier» լրագիրը յայտնում է, որ լորդ Կիմբէրլէյի պաշտօնական ճառից յետոյ, այլ ևս կասկած չը մնաց ոչ ոքի համար, թէ պէտք է բարեփոխվի Փոքր-Ասիայի քրիստոնեաների վիճակը, ստեղծելով մի այնպիսի կառավարութիւն, ինչպէս հաստատված է, օրինակի համար, Արևելեան Ռումէլիայում, նախ քան նա միացրվեց Բոլգարիային, նշանակելով կառավարիչ միացեալ նահանգի համար՝ քրիստոնեայ նահանգապետ։

«Daily Graphic» լրագիրը, թէև գտնում է լորդ Կիմբէրլէյի ճառը շատ զգոյշ և ոչ այնքան վճռական, որքան սպասում էր անգլիական հասարակութիւնը, այնու ամենայնիւ վերաբերվում է դէպի այդ ճառը մեծ յարգանքով՝ հաւատալով լորդ Կիմբէրլէյի երկիւղին, որ պէտք է խուսափել այնպիսի քայլեր անելուց, որոնք կարող են նորից յարուցանել արևելեան խնդիրը։ Լրագիրը խորհուրդ է տալիս հաւատալ կառավարութեան խոստումներին և ճնշումներ գործ չը դնել նրա վրա։ Պէտք է յուսալ, որ կառավարութիւնը ամեն միջոց գործ կը դնի բաւարար կերպով լուծելու այս կնճռոտ խնդիրը։

«The Leicester Daily Post» լրագիրը համարում է լորդ Կիմբէրլէյի պատասխանը շատ բաւարար, որովհետև այդ պատասխանի մէջ նա գտնում է և այն, որ կառավարութիւնը ամենամանրամասն կերպով հետամուտ է տեղեկանալու, թէ ինչ է կատարվել սարսափների երկրի մէջ, որ նա համաձայնութիւններ է կայացրել եւրոպական միւս կառավարութիւնների հետ, որ նա կը դիմի նոյն իսկ վճռական քայլերի, երբ կը դայ ժամանակը։

Լօրդը յայտնեց, որ Թիւրքերի սեփական շահն է պահանջում այնպիսի դրութիւն ստեղծել, որ յեղափոխական շարժումների առիթներ չը լինեն երկրի մէջ. բայց, դժբաղդաբար, Թիւրքը անընդունակ է օգտվել այն դասերից, որ նա ստացել է մի քանի անգամ։ Ուստի բարեշրջումների ծրագիրների մէջ պէտք է լինի ժողովրդի ապահովութեան գրաւականը։

«Norfolk Standard» լրագիրը լորդ Կիմբէրլէյի խօսքերի մէջ տեսնում է հաստատ որոշում օգնելու հայկական գործին և վերջ դնելու այն անարգ վիճակին, որ վիրաւորում է ժամանակակից քաղաքակրթութիւնը։

«Սուլթանի գահը այնքան ապահով չէ, որ նա հեղնութեամբ վերաբերվի եւրոպական միացեալ պահանջներին։ Եւ Փոքր-Ասիան այնպիսի մի երկիր չէ, որի կորցնելը Թիւրքի համար անզգալի լինի. իսկ նա կը կորչի, եթէ չի ստանայ կարեոր լայն բարենորոգութիւններ։

ՍԱՍՈՒՆՑԻՆԵՐԸ ԼՕՆԴՕՆՈՒՄ ԵՒ ՆՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑԱԼԸ ԳԼԱԴՍՏՕՆԻՆ

Ապրիլի 1-ից մեզ գրում են Լօնդօնից հետևեալը.

«Սասունցի փախստականները՝ երկու մարդ և մի կին, Լօնդօն հասան մարտի 26-ին, դոկտոր Ալանի հետ, և Ն. Ներսէսեան զանոնք հիւրընկալեց իր տան մէջ։ Անոնք, ինչպէս իմացանք, ներկայացրած են Սթիվենսօնին և Բրայսին, և շուտով պէտք է ներկայանան արտաքին գործոց մինիստր լորդ Կիմբէրլէյին և Գլադստօնին»։

Երէկվայ պօստով ստացված Լօնդօնի լրագիրները հաղորդում են շատ մանրամասնութիւններ այդ սասունցիների և նրանց տեսակցութեան մասին։

Բացի դրանից եւրոպական զանազան լրագիրների թղթակիցները այդ մասին հեռագիրներ են ուղարկել իրանց լրագիրներին։ Այսպէս, օրինակ, գերմանական «Voss. Zeitung» լրագրին Լօնդօնից, ապրիլի 16-ից, հեռագրում են հետևեալը.

«Գլադստօնը երէկ ընդունեց Հօվարդենում հայկական ներկայացուցչութիւնը։ Սասունից եկած հայերը ներկայացան իրանց ազգային զգեստներով։ Զանազան հարցերից յետոյ, որոնք վերաբերում էին այն հանդամանքներին, որոնք առաջ բերին Սասունի կոտորածը, Գլադստօնը յայտնեց իր խորին ցաւակցութիւնը և ասաց, որ նա յոյս ունի, որ հայերի բարեկամները սուլթանի լոկ խոստումներով չեն բաւականանայ, այլ առաջ կը տանեն գործը։ Ինքը Գլադստօնը շատ հետաքրքրվում է հայերի վիճակով, բայց իբրև ծերացած մի անձ յետ է քաշվել քաղաքական ասպարէզից։ Բայց նա գդում է քրիստոնէական պարտքը և կանէ այն բոլորը, ինչ նա կարող է, պաշտպան հանդիսանալու նրանց, որոնք քրիստոնէական հաւատի համար տանջվում են»։

Սասունցիների ընդունելութեան մասին Լօնդօնից «Нов. Обоз.» լրագրի թղթակիցը գրում է հետևեալը.

«Երեքշաբթի, ապրիլի 15-ին, Գլադստօն ընդունեց հայ-փախստականների պատգամաւորութիւնը, Հօվարդենում։

«Ամրոցի դահլիճում, բացի Գլադստօնից և նրա ամուսնուց, հաւաքվեցին ՀէՆերի և Էլլէն Գլադստօնները և այդ պատուելի ընտանիքի մի քանի ուրիշ անդամները։ Ընդունելութիւնը, որ մասնաւոր բնաւորութիւն էր կրում, ուղիղ կէս ժամ շարունակվեց։ Գլադստօն մեծ հետաքրքրութեամբ լսում էր այդ փախստականների կեանքի պատմութիւնը, հարց ու փորձ արեց նրանց կենցաղավարութեան մասին հայրենիքում, հետաքրքրվեց նրանց արևելեան հագուստներով։ Գլադստօն իր հարց ու փորձերի ժամանակ կանգ առաւ Սասունի կոտորածի պատճառների վրա, առանց մանրամասնութիւնների մէջ մտնելու, որովհետև իր համար, ինչպէս ինքն այնտեղ և եթէ բացատրեց Ակտինսին—այդ բանը չատ ծանր է։»

«Գլադստօն խնդրեց ուշադրութիւն դարձնել այն հանգամանքի վրա, որ իր 85 տարին արդէն լրացել է և որ ինքն կատարելապէս և վերջնականապէս հեռացել է քաղաքական կեանքից, բայց որպէս քրիստոնեայ նա իր պարտքն է համարում անել բոլորը յօգուտ հայերի, ինչ որ կը կարողանայ անել իր կեանքի մնացած օրերի ընթացքում և գործել նրանց համար, որոնք ապացուցեցին իրանց հաւատարմութիւնը քրիստոսի կրօնին։

«Գլադստօն և իր ամուսինը հայ պատգամաւորներից իւրաքանչիւրին տուեցին մի մի լուսանկար պատկեր իրանց ֆակսիմիլէով և մի մի փունջ ծաղիկներ։ Վերջը Գլադստօն եռանդով կրկնեց, որ սուլթանի ռէֆօրմներին սպասելը անօգուտ է և որ ինքն, Գլադստօն, կանի թշուառների համար բոլորը, ինչ որ կարող է։

«Հայոց պատգամաւորներից մէկը, Պետրոսը, շնորհակալութիւն յայտնեց Գլադստօնին այդ ընդունելութեան համար և իր հայրենակիցների անունից յոյս յայտնեց վերադառնալ կրկին հայրենիքը և վերականգնել իրանց բնակարանները. Անգլիայում իրանք մնալ չեն կարող, թէպէտ և երջանիկ են, որ ընդունվեցին Գլադստօնից։

«Նախասենեակում, դուրս գալու ժամանակ, ուր հաւաքվել էր «մեծ ծերունու» ամբողջ տունը մինչև ծառաները, Գլադստօն կրկին անգամ իր ջերմ համակրութիւնները յայտնեց հալածականներին։

«Ամրոցից պատգամաւորութիւնը գնաց Գլադստօնի որդու, պաստօր Սթիվէն Գլադստօնի տունը, ուր նախաճաշեցին. Գրինը այդտեղ հանեց նրանց լուսանկարները։ Հօվարդէնից մինչև կայարանը նրանց ճանապարհ գցեցին Հէրբէրտ և Հէնրի Գլադստօնները»։

ՀԱՑՈՑ ՀԱՐՑԸ ԵՒ ԵՒՐՕՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

I

Վարնայից «Daily News» լրագրին հեռագրում են ապրիլի 13-ից հետևեալը.

«Մուշից տեղեկութիւն է ստացված, որ քիւրդերի առաջնորդ Բէխիրիզօ, որին սովորաբար «Սասունի տէր» են անուանում, այս օրերս իր մի քանի զինուորների հետ միասին յարձակում գործեց այն վանքի վրա, որ կառուցված է լեռնային բարձրութիւններից մէկի վրա Սասունի շրջանում։ Վանքի վանահայրը բացակայ էր, որովհետև նա փախել էր դեռ Սասունի կոտորածների ժամանակ։ Նրան փոխարինում էր նրա եղբայրը, որին և դիմեց Բեխիրիզօ՝ պահանջելով տալ իրան վանքի ամբողջ գոյքը, որոնց թւում և արծաթէ սկիհները և շատ թանգագին գորգերը։ Այդ պահանջը մերժելու պատճառով, քիւրդերը, իրանց առաջնորդի հրամանով, վարդապետին տանջանքի ենթարկեցին չիկացած երկաթով, ապա կողոպտեցին վանքը և տարան բոլորը, ինչ որ կարելի էր տանել։ Այդ կողոպուտի մասին տեղեկութիւն տրվեց Բիթլիսի նահանգապետին, որը իսկոյն և եթէ վանքն ուղարկեց քառասուն հեծեալ զինուորներ, սակայն զինուորները ուշ հասան և քիւրդերի հետքն անգամ չը կար»։

II

Հռոմից «Daily News» լրագրին հեռագրում են ապրիլի 3-ից հետևեալը. Բաղդադի հռոմէական-թօլիկական արքեպիսկոպոսը՝ Ալտմէյեր սպասվում է այս օրերս, ուր նա գալիս է մի միսիոների՝ Լիուէլլէրի ուղեկցութեամբ Հայաստանից։ Միսիոնէրը ականատես է եղել այն գազանութիւններին, որ գործում էին Թիւրքերը Հայաստանում։ Արքեպիսկոպոսի այցելութեան նպատակն է՝ բացատրել Պրոպագանդային իր հայեացքաստ, Ամասիա և այլն, և այնտեղ էլ արձակել է բանտարկութեան հարիւրաւոր անպարտ զոհեր։

Բայց վալին օգուտ քաղելով այս հանգամանքից աշխատել է հայ հասարակութիւնից գոհունակութեան և շնորհակալութեան ուղերձներ առնել, բայց չէ յաջողվում ոչ մի տեղ։ Միայն Ամասիայում 2 քահանայ և մի քանի հոգի ստորագրում են այդպիսի մի թերթ բանտարկեալներին ազատել տալու յոյսով։

Այստեղ վալին մի ուրիշ մեծ գործ էլ է կատարել։ Առաջաւոր հայերից 25—30 հոգուց բաղկացած մի յանձնաժողով է նշանակել «Էմնիյէթ քօմիսիօնու» անունով, որին հրահանգ է տուել հսկել քաղաքի ապահովութեան վրա, հրամայելով, որ այն հայերը, որոնք չեն անսայ յանձնաժողովին, անկարգութիւններ կանեն և կամ կասկածվում են յեղափոխական շարժումների մէջ, յանձնեն կառավարութեան։—Այս կերպով վալին նոյն իսկ հայերի ձեռքով է ուզում իր խստութիւնները շարունակել։

Եւ ցաւալի է ասել, որ թէև հետզհետէ զգալի կերպով պակսում են մատնութիւնները հայերի մէջ, բայց գտնվում են դարձեալ այնպիսի անհատներ, որոնք շարունակում են գործիք դառնալ տեղական կառավարութեան ձեռքը իրանց անձնական շահերի համար։ Ցաւալի է, ասացի այդ, բայց որչափ աւելի ցաւալի, երբ հայ հոգևորականն է այդ բանը կատարողը, նա, որ ամենից աւելի պէտք է պաշտպան կանգնէր իր ժողովրդեան և եկեղեցու իրաւունքների՝ ընդդէմ անիրաւութեան։ Ամասիայի գլխաւոր քահանան, մի ոմն տէր Խորէն, ընդհանուրի վկայութեան համաձայն, այդպիսի մատնիչների մէջ առանձին կարևոր տեղ է գրաւում, Նրանով մանաւանդ, որ ինքն մենակ չէ, այլ արբանակներ էլ ունի իր հետ։ Այդ տէր Խորէնին ներելի լինէր պահել Ամասիայում գուցէ իր անուանակից պատրիարքի օրով, բայց Իզմիրլեանի ժամանակ այդպիսի բան պէտք չէ որ պատահի. իսկ իր վիճակաւոր իշխանութիւնը, Տրապիզօնի առաջնորդը, չէ համարձակվում իր սեփական իշխանութեամբ նրան այնտեղից հանելը, թող դեռ պատժելը, և գրել է պատրիարքարան, որից է կարգադրութիւն սպասում։ Ո՞վ գիտէ քանիներ կան այդպէս ներսերը։ Ժամանակ չէ՞ արդեօք զօրաւոր ձեռքով այդ անարժան եկեղեցականները գոնէ Հայաստանի հողից ալեկ հանելու։—Արդեօք այդպիսիները Էտիրնէի Մեսրոպ եպիսկոպոսի նման չքանչանի են սպասում ի վարձատրութիւն հաւատարիմ ծառայութեան։ Կ. Պոլսում միշտ պատրաստ են վարձատրել դրանց նմաններին. օրինակներ են պակաս։

Անցեալները Տրապիզօնում՝ տեղական հարուստ թիւրքերից մէկի՝ Արնաւուդ օղլիի նախաձեռնութեամբ, գրգռված մահմետական ժողովրդի առաջաւորները հաւաքվում են նրա տանը և խորհուրդ են անում մի ընդհանուր կոտորածով ջարդ տալ քաղաքի ամբողջ հայ ազգաբնակութեան։ Խորհուրդը չեն կարողանում գաղտնի պահել. լսում է քաղաքի զինուորական հրամանատարը, որ դէմ է կանգնում այդ հրէշային մտադրութեան և միջոցներ է ձեռք առնում արգելելու կոտորածը։ Դաւադիրները չնորհիւ այդ պարագայի միայն, ետ են կենում։ Խնդիրը հասնում է Կ. Պոլիս. և այնտեղից Արնաւուտ օղլի կանչվում է բացատրութիւն տալու։ Ամեն մարդ սպասում է եղել Տրապիզօնում, թէ Արնաւուտ օղլին, դաւադիրների այդ գլխաւորը, կը պատժվի։ Եւ ահա յանկարծ իմացվում է, թէ ոչ թէ միայն չէ պատժվում, այլ դեռ Մէջիդիյէ չքանչանի դ. աստիճան է ստանում և շուտով առաջ փառաջ պիտի դառնայ Տրապիզօն։

Լրտեսների չղթան, որ իր մէջ առած պատում է ամբողջ Կ. Պոլիսը, տարածվել, պատել է նաև գաւառները։ Հաստատ աղբիւրից ինձ հաղորդեցին որ, օրինակի համար, Ամասիայում միայն, 20 մարդ կան, որոնց պաշտօնն է գաղտնօրէն քննել փոքր ի շատէ կարևորութիւն ունեցող պաշտօնեաների վարմունքը, եկող գնացող ճանապարհորդները։ Իրանք, Թիւրքաց պաշտօնեաները շատ լաւ գիտեն այդ պարագան. ուստի միմեանց հետ խիստ զգուշօրէն են վարվում։ Միւթէսարրֆը զգուշանում է հաքիմից (դատաւոր), հաքիմը միւդդաիի ումումիից, սա՝ փօլիս քօմիսերից, որն իր կողմից վախ է քաշում իր փօլիսներից (պօլիցիական) և սրանք բոլորն էլ միանդամայն ծպտեալ լրտեսներից, որոնք յարաբերութիւն ունեն կենտրօնի հետ։

Ամենամեծ հոկողութիւն է լինում օտարահպատակ ճանապարհորդների վրա. որին կարողանում են, ուղղակի բանտարկում, չարչարում են։ Վերջերս Ռիզէի մօտակայ գիւղերում առևտրով պարապող ռուսահպատակ մի հայ-կաթօլիկ երիտասարդին բռնում են, չղթայակապ ուղարկում Ռիզէ և Ռիզէից էլ Տրապիզօն։ Տրապիզօնում, վալին, երկար քննութիւնից յետոյ, երբ ոչ մի յանցանք չէ կարողանում գտնել վրան, ուղղակի արձակում է և խեղճ երիտասարդը ստիպված է լինում, բանտից դուրս գալուց յետոյ, մի հայ-կաթօլիկ քահանայից մէկ մէջիդիյէ փոխ առնել, որ կարողանայ իր տեղը վերադառնալ։

Սրանից երկու շաբաթ առաջ էլ մի ուրիշ ռուսահպատակ հային Տրիպոլիում (Կիրասունի մօտ) մաքսատան մէջ ծեծելուց յետոյ տանում են բանտ. լուրը հասնում է Տրապիզօն ռուսական հիւպատոսին, որի կարգադրութեամբ Կիրասունի փոխ-հիւպատոսը գնում է Տրիպոլի, գործը քննելու. իսկ տեղական վարչութիւնը հիւպատոսարանի միջամտութեան մասին տեղեկութիւն առնելով, կանխաւ արձակում է նրան։

Իսկ որին չեն կարողանում կամ չեն համարձակվում բանտարկել, նրան էլ ուրիշ միջոցներով են նեղացնում։

Սամսօն, Սև ծովի տաճկական եզերքի ամենակարևոր առևտրական քաղաքն է, որ միջնորդ է հանդիսանում Հայաստանի ներքին գաւառների և Կ. Պոլսի ու Եւրոպայի մէջ. բայց եւրոպական գրքերը քննելու համար մի կանոնաւոր թարգման չունեն և ստիպված են Տրապիզօն ուղարկել։

Քաղաքի բարձրագոյն պաշտօնատարների մէջ էլ միայն դատախազը փոքր ինչ խօսում է ֆրանսերէն։ Իսկ նահանգական դատարանի նախագահը մի մօլլա է, գլխին կանաչ փաթթած, որ բացի իր թուրքերէնից և իր Շէրիաթիցն ու դիւանագիտութիւնից ուրիշ բան չը գիտէ։ Իմ Սամսօնում եղած ժամանակ, ոստիկանութիւնը այդ ծերունի մօլլա-դատաւորին այնպիսի մի անբարոյականութեան յանցանքի մէջ էր բռնել en flagrant délit, որ մարդ նոյն իսկ ծածուկ կամաչէ ուրիշին ասել։ Եւ ոչինչ, գործը խեղդեցին, և դատաւորը շարունակում է իր պաշտօնը։

Ականատես

քը հայոց հարցի վրա և քննութեան առարկայ դարձնել Հայաստանի դրութիւնը։»

III

Զատիկ օրը, պատարագի ժամանակ, Հօվարդէնի եկեղեցում, հաղորդութեան համար առաջին անգամ գործ դրվեց այն արծաթէ բաժակը, որ հայերը ընծայեցին Գլադստօնի եկեղեցուն՝ նրա Եւրոպա գնալուց մի փոքր առաջ։ «Ես կառնեմ փրկութեան բաժակը և աղօթքներս կուղղեմ առ Աստուած» քնարան առնելով, պաստօր Ստիվէն Գլադստօնը խօսեց հայ ժողովրդի տանջանքների մասին։ Եկեղեցին լի էր «մեծ ծերունուն» տեսնել ցանկացող անձերով. այդտեղ էր գտնվում և հայ-աքսորեալների պատգամաւորութիւնը։»

IV

Լօնդօնից գրում են «Voss. Zeitung» լրագրին, որ մինիստրների ժողովը խորհրդակցելով հայոց հարցի մասին, որոշել է աշխատել իմանալու Գերմանիայի, Աւստրիայի և Իտալիայի տեսակէտը այդ խնդրի մասին։

V

Հայաստանում երկար ժամանակ քարոզչութիւն արած ամերիկեան «Ոբտ» ընկերութեան միսիոնէր Ֆրէդերիկ Գրինը հրատարակել է մի գիրք հետեւեալ վերնագրով. «Հայկական ճգնաժամը Թուրքիայում. 1894 ի կոտորածը, նրա յարակից պարագաները և նրա նշանակութիւնը»։ Գիրքը կրում է դոկտոր Ստրօնգի մի առաջաբանը, որ յայտնում է, թէ նա մի կարևոր աշխատութիւն և թէ վաղուց մի բացարձակ պէտք կար այդպիսի մի գրքի, որ կարողանար որոշ և ամփոփ գաղափար տալ Հայաստանի այժմեան վիճակի մասին։

VI

Լօնդօնից հեռագրում են ապրիլի 4-ից հետեւեալը. «Շաբաթ օր Նորֆոլկում, լորդ Կիմբերլէյը մի ճառում խօսելով հայկական խնդրի մասին, յայտնեց, որ հալածված հայերը անգլիական կաբինետի բոլոր անդամների համակրութիւնն են վայելում. կառավարութիւնը պէտք է աշխատի էական միջոցների դիմել։»

ՉԱՐԼԶ ՖԻՑՋԷՐԱԼԴ

Պետերբուրգի «Новое Время» լրագրի պատկերազարդ յաւելուածում տպագրված է անհետացած անգլիական յայտնի թղթակից Չարլզ Ֆիցջէրալդի պատկերը, կենսագրական մի քանի տեղեկութիւններով։ Ահա այդ տեղեկութիւնները։

«Չարլզ Ֆիցջէրալդ, յայտնի անգլիական զինուորական թղթակիցը, որի տարօրինակ անհետանալու մասին խօսում են բոլոր Եւրոպական լրագիրները, երբեմն ծառայում էր զօրքում։ Երիտասարդ հասակում, պօղպօրչիկի աստիճանով, նա Կրիմում էր և 1865 թուին թողեց զինուորական ծառայութիւնը կապիտանի աստիճանով։ Ապա նա ճանապարհորդեց Ամէրիկայի Հիւսիսային Միացեալ Նահանգներում և Կանադայում, այնտեղից վերադարձաւ Անգլիա ռուս-թուրքական պատերազմի սկսվելուց առաջ։ Այդ պատերազմի մէջ նա «Standard» լրագրի թղթակիցն էր թուրքաց զօրքերի մօտ։

Դրանից յետոյ, նա նոյն լրագրի ներկայացուցիչն էր Բերլինի կօնգրէսում և Յունաստանում, իսկ 1879 թուից մինչև 1882 թուը ճանապարհորդեց Բալկանեան թերակղզում, Յունաստանում և Արևելեան Եւրոպայում, որպէս անգլիական և արտասահմանեան զանազան լրագիրների թղթակից։ Եգիպտական արշաւանքի ժամանակ նա «Manchester Guardien» լրագրի յատուկ թղթակիցն էր։ 1884 թուից նա «Daily News», «Manchester Guardien» և Հնդկաստանում հրատարակվող «Pioneer» լրագիրների թղթակիցն էր։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՇԽԱՆՈՒՀԻ ԲԱՐԲԱՐԷ ՋՕՐՋԱՁԷ

Ապրիլի 11-ին Թէլաւում վախճանվեց, 61—62 տարեկան հասակում, վրաց կին-գրող իշխանուհի Բարբարէ Ջօրջաձէ։ Հանգուցեալը վրաց ծերունի բանաստեղծ Բաֆայէլ Էրիստաւի քոյրն էր։

Նա իր գրականական գործունէութիւնը սկսեց 1853 թուին վրաց «Ցիսկարի» (Հորիզոն) ամսագրում և այդ ժամանակից գրեթէ վրաց բոլոր պարբերական հրատարակութիւնների մէջ մասնակցում էր։ Նա գրում էր բանաստեղծութիւններ, արձակ գրութիւններ և պիէսներ և յայտնի էր իր մաքուր և անարատ վրացերէն լեզուով։

Նրա գրած պիէսներից աչքի են ընկնում «Շուրի» (նախանձոտ) դրաման և «Բա դավկարգէ, բա վիպօվէ» (ինչ կորցրի, ինչ գտայ) կոմէդիան, որոնք աջողութեամբ ներկայացվում էին վրաց բեմի վրա։ Իսկ Ղորբաս գրել է «Մշվենիէրի կէկէլա» (գեղեցիկ կէկէլ) դրաման, որը այժմ գրանվում է իր եղբօր՝ Բաֆայէլ Էրիստաւվի մօտ։ Բացի դրանից ունի և ուրիշ անտիպ գրուածներ։

Վրաց հասարակութեան մէջ հանգուցեալը յայտնի էր իբրև շնորհով գրող և գլխաւորապէս իբրև լաւ վրացերէն խմացող։ Նա աշխատակցում էր և «Իվերիա» լրագրի մէջ։

ԱՅՏՆԵԱՆԻ ՅԻՍՆԱՄԵԱՅ ՅՕԲԵԼԵԱՆԸ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Մենք արդէն առիթ ունեցանք հաղորդելու, որ Վիէննայի Մխիթարեան միաբանութիւնը պատրաստվում է տօնելու իր աբբահայր Արսէն արքեպիսկոպոս Այտնեանի քահանայական և ուսումնական գործունէութեան 50-ամեայ յօբելեանը։

Ինչպէս մեզ հաղորդում են Վիէննայից, Այտնեանի 50-ամեայ յօբելեանի պատրաստութեան համար՝ Վիէննայի հայ գաղթականութեան անդամներից Գր. Ճերմակեան, Պետրոս Շիշմանեան, Զ. Բօբովիչ, Յովհ. Վարդապարիկեան, և Մխիթարեան հայրերից՝ Միքայէլ վ. Թուրչայեան, Գր. վ. Գալէմքեարեան և Բառնաբաս վ. Պիլէզիկճեան մի յանձնախումբ են կազմել, որը արդէն նիստեր է ունեցել։

Այս յանձնախումբը ուղարկել է մեզ հետեւեալ գրութիւնը, որը աւելորդ չենք համարում տպագրել «Մշակի» էջերում։

«Յանձնախմբի նիստերից մէկում, անդամ Զատիկ Բօբովիչ առաջարկեց «Այտնեան արուեստագիտական հիմնարկութիւն» անուամբ հաստատութիւն մը կազմել, որուն գործն ըլլայ վարչական ժողովոյ մը առաջնորդութեամբ արեւելքէն (Տաճկաստան, Ռուսաստան, Պարսկաստան և այլն) հայ աղքատ պատանիներ Վիէննա բերել տալ, և այստեղ պարզ ձեռագործ արուեստներ սորվեցնել 3—4 տարի, և վարպետ հանելէն ետև վերադարձնել։ Յանձնաժողովը այս առաջարկութիւնն ազգին արուեստագիտական և նիւթական զարգացման շատ օգտակար, և հայ հասարակութեան սրտին շատ մօտ գտնելով՝ ընդունեցաւ, և սկսաւ կազմակերպութեան վրա խորհիլ և առանձին կանոնագրութիւնը կազմել։»

Այդ առաջարկութեան առիթով «Հանդէս Ամսօրեայի» խմբագրութիւնը ասում է հետեւեալը.

«Այս առաջարկութիւնը խմբագրութիւնս ալ ամենայն ուրախութեամբ կընդգրկէ։ Հիմնարկութեանս նպատակին գործադրութիւնը դիւրին, իսկ արդիւնքն ազգին արուեստական և նիւթական զարգացման մեծապէս շահաւոր է։ Վասն զի պատանւոյ մը ձեռագործ արուեստ սորվեցնելու համար առաջին տարին իբր 400 ֆրանք ծախք կըլլայ Վիէննա, երկրորդ տարին պատանին այնչափ կը կրթուի, որ կարող կըլլայ վաստակի սկսիլ և նիւթական նպաստի պէտք չունենար։ Եւրոպայի արուեստագիտական մէկ քաղաքին մէջ վարպետ եղած պատանին, այնուհետև իւր տեղը դառնալով՝ արուեստը գործադրելու համար կը ստիպուի աշակերտներ ունենալ։

«Կարելի է ուրեմն մտածել, որ որչափ այսպիսի ուսեալ վարպետներ յառաջ կը բերուին, այնչափ շուտով կը ծաւալի ժամանակիս կատարելագործեալ արուեստներն ազգիս մէջ։ Եւ ասկէ ինչ մեծ օգուտներ ազգին։ Ամենուն ծանօթ է, որ մեր ազգին բնակած երկիրներն այնպիսի առատ անմշակեալ նիւթեր ունին, որոնք Եւրոպայի մէջ չեն գտնուիր, և այս նիւթերն չնչին գրամոյ փոխարէն կանցնին Եւրոպա, ուր գործուելէն ետև կը դառնան մեզի քանի մը առ հարիւր գինը բարձրանալէն ետև. և կամ օտարներ կու գան և իրենց մի միակ արուեստագիտութեամբն կօգտուին մեր նիւթերէն։ Եւ նոյն իսկ մեր ամենասովորական պիտոյից առարկաներն Եւրոպայէն ստիպուած ենք առնուլ։ Իսկ եթէ տեղացի արուեստաւորներ գըտնուին, այս օգուտներն կը մնան մեզի։ Մանաւանդ որ հայն ի բնէ արուեստից ընդունակութիւն ունի, և ճաշակն, որ արուեստի մէջ մեծ դեր կը խաղայ, հայուն բնածին է։

«Դարձեալ արուեստագիտութիւնն արդիւնաւոր ըլլալու համար անհրաժեշտ է որ արուեստանոցին մէջ տիրէ անտեսութիւն, խնայողութիւն, և ամեն բանէ օգուտ հանել. այս ևս միշտ տեսնուած է ազգիս յատկութիւններուն մէջ։

«Այն ազգերն, որոնք այնչափ վաճառականութեան ձիրք չունին, իրենք զիրենք արուեստից տուած են, և ասով իրենց երկիրն հարստացուցած. օրինակ անգղիացիք, գերմանացիք, աւստրիացիք և այլն, որոնց նաև ըստ մասին ճաշակ ալ կը պակսի. և սակայն այսօրս իրենց արուեստովն առևտուրի մէջ առաջին դերը կը խաղան, և իրենց ապրանքներն աշխարհիս ամեն կողմը տարածուած են։ Իսկ որչափ աւելի մեծ արդիւնք սպասելու է հայէն, որ ինչպէս բովանդակ աշխարհս կը խոստովանի, վաճառականութեան ձիրք ունի ի բնէ, երբ իւր այս ձիրքին միացնէ նաև կատարելագործեալ արուեստը։

«Կը մաղթենք որ այս հիմնարկութեան եկամուտը կարելի ըլլայ տարեկան 10,000 ֆրանքի հասցընել, որ ըստ ինքեան մեր ազգին համար ոչինչ բան է. բայց այս ոչնչով կարելի պիտի ըլլայ իւրաքանչիւր տարի 25 հայ պատանի բերել, անոնց նիւթական ապագան պատրաստել և զիրենք իբրև կրթիչ տեղացի պատանիներու՝ ուղարկել։

Աւելի մեծ է մեր յոյսն՝ որ այս ձեռնարկութիւնը ազգը պիտի գնահատէ և ամենայն կերպով ընդդրկէ։»

Այս հարցի մասին մենք կաշխատենք մեր կարծիքը յայտնել «Մշակի» յաջորդ համարներից մէկում։

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆԸ

«Մշակի» 26-րդ համարում տպված «Հացը թանգ է» խորագրով յօդուածում, խօսելով հացի թանգութեան մասին, խոստացանք մի ամփոփ նկարագիր տալ ընթերցողներին քաղաքային առևտրական—տնտեսական ոստիկանութեան մասին։ Կատարում ենք մեր խօսքը։

Այդ ոստիկանական խումբը բաղկացած է 12 հոգուց, որոնցից վեցը ագենտներ են, իսկ վեցը —ագենտի օգնականներ. և այդ բոլորի գլխաւորն է մէկը, որ կոչվում է աւագ ագենտ (старшій агентъ)։ Սրանք բոլորն էլ միջին կրթութիւն ստացած անձեր են, մի մասը աւարտած և մի մասը կիսակատար թողած. բարձրագոյն կրթութիւնը բացակայում է։ Սրանցից շատերը, նախքան վերոյիշեալ պաշտօնը ստանձնելը, վարել են պետական կամ հասարակական պաշտօններ. բայց նախկին մանկավարժների թիւը գերակշռող է այստեղ։ Մեր ասածներից ընթերցողը կը համոզվի, որ վերոյիշեալ անձերը գոնէ միջնակարգ կրթութիւն ստացած լինելով, ընդունակ են իրանց պարտաւորութիւնը ճշդօրէն կատարել. մենք էլ մի և նոյն կարծիքի էինք, բայց... վերջը կը տեսնենք։

Թէ ինչպիսի պարտաւորութիւններ ունի կատարելու մեր առևտրական-տնտեսական ոստիկանութիւնը, այդ հարցը մանրամասնօրէն պարզված է Թիֆլիսի քաղաքային դումայի կողմից հաստատված հրահանգների մէջ։ Այդ հրահանգները գեղեցիկ են, խելօք.—բայց միշտ մնում են մեռած տառ։

Այդ հրահանգների բովանդակութեան համեմատ, մենք՝ Թիֆլիսցիներս, պէտք է վարվենք ու ապրենք առանց որ և է շեղումներ գործելու և դժուարութեան։

Օրինակ, հրահանգը ասում է մսավաճառների մասին, ի միջի այլոց, § 2-ում, որ մսավաճառի խանութի յատակը ծածկված պէտք է լինի ցեմենտով կամ ասֆալտով։ Բացի դրանից, յիշեալ խանութներում պէտք է լինի նաև քաղաքային ջրանցքից անցրած մի ծորակ (որոնք մօտ են ջրանցքին), որպէս զի կարելի լինի առողջապահութեան պահանջներին համեմատ մաքրութիւն պահպանել։

Բայց մենք հաստատապէս կասենք, որ այս կանոնը չէ կատարվում. նոյն իսկ մենք պատրաստ ենք ամեն մի բոպէ ցոյց տալ ցանկացողին, որ շատ խանութներում, չը նայելով ջրանցքի մօտիկ լինելուն, բոլորովին ջուր չը կայ։ Բացի դրանից յատակը տախտակամած է և ոչ թէ ցեմենտից կամ ասֆալտից. այս մէկ։

Երկրորդ. կարդանք § 9, որ ասում է՝ թէ մսավաճառները պարտաւոր են որոշված տակսայի համեմատ ծախել միսը, գնողների հետ քաղաքավարի լինել և կոչտ ու կոպիտ խօսքեր չասել։ Սակայն ումը յայտնի չեն մեր մսավաճառների «սրախօսութիւնները», որոնք անեկդոտների չարքն են անցել։

Իսկ ինչ վերաբերում է տակսայի համեմատ ծախելուն, բաւականանանք մի կարճառօտ խօսակցութիւնով։

—Պարոն ագենտ, մսի ֆունտը արժէ 8 կոպէկ, այն ինչ մսավաճառը 10 կոպէկ առաւ ինձնից. խնդրում եմ դաք, արձանագրութիւն կազմէք այս մասին։

—Ի՞նչ էք զարմանում, բարեկամ, քանի որ մենք, ագենտներս 10—12 կոպէկով ենք առնում միսը։

Դուք զարմանում էք, ընթերցող, բայց սա եղելութիւն է։

Երրորդ. § 11-ի մէջ ասված է, որ մեծ թէ փոքր կենդանիները պէտք է մորթվեն բացառապէս քաղաքից դուրս գտնվող քաղաքային սպանդանոցում։ Կատարվում է այսպէս։ Ի հարկէ, ոչ։ Որովհետև, եթէ կատարվելիս լինէր, մենք, համարեա թէ ամեն օր, չէինք տեսնի խանութներում և հրապարակի վրա ծախվող փչած ոչխարի և դառան մսեր։

Չորրորդ. § 5 վերաբերում է հացթուխներին և ասում է. հացը չը պէտք է լինի կիսաթուխ, թթու, դառը, ծթված ալիւրից թխած, և այլն։ Բայց ինչով է արդարանում այս պարագրաֆը, քանի որ ամեն անգամ կարելի է հրապարակի վրա գտնել վերոյիշեալ տեսակ անպիտան հաց։

Մենք ինքներս շատ անգամ ենք վկայ եղել գնելու միջոցին, որ հացը լեղու պէս դառն է եղել և «բաղարնիկին» յայտնել ենք այս մասին. բայց նա, փոխանակ բոլոր հացերը հաւաքելու, ագենտին կանչելու, որ վերջինս արձանագրութիւն կազմի, մեզ հրաւիրել է գնալ ագենտի մօտ գանգատվելու։ Մինչդեռ ըստ կանոնի, բաղարնիկը, ագենտը և սրա օգնականը պարտաւոր են անձամբ չրջագայել ամբողջ հրապարակը և օրինազանցութիւն նկատելուն պէս իսկոյն և եթ արձանագրութիւն կազմել և դատաստանին յանձնել օրինազանցին։

Վերջապէս, § 7-ի զօրութեամբ անպայման արգելվում է հացթուխներին և սրանց գործակատարներին քնել (գիշերը թէ ցերեկը) այն տեղերում, որտեղ ալիւր մաղվում, խմորը հունցվում և հացը ծախվում է։

Մարդս արդէն ակամայ ծիծաղում է այս պարագրաֆի վրա, որը երբէք չէ գործածվում և ցանկացողը երբ կամենայ, թող մանի, իր աչքով տեսնի, որ այդ տեղերում ոչ թէ միայն իրանք հացթուխներն են քնում, այլ և կողմնակի մարդիկ։ Իսկ այս ամենից յետոյ կարելի բան է, որ քաղաքացիներս մաքուր հաց ուտենք։

Քաղաքային վարչութեան կարգադրութիւնների մէջ պահանջվում է նոյնպէս, որ ամեն տեղ գործադրվող կշռաքները, կշռաքարերը, արշինները և չափերը դրոշմված լինեն քաղաքային դրոշմով. փռնիչների թաւաները և բոլոր կրպակներում գործածվող կաթսաները պէտք է մաքուր և կլէկած լինեն։ Բայց տեսէք թէ որքան կեղծ կշռաքարեր են գործածվում, քանի-քանի թաւաներ և կաթսաներ կը գտնէք առանց կլէկի և չուգունի նման սև։

Դրանք փաստեր են։ Միթէ ուրեմն քաղաքային վարչութիւնը հրահանգներ է հրատարակում, որպէս զի մեռած տառ մնան։ Ինչով կարող են արդարանալ։

Ն.

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Ապրիլի 11-ին

Վաղը, ամսիս 12-ին, ըէալական դպրոցի հանգուցեալ դիրեկտոր Կամենկու համար հայոց եկեղեցում հոգեհանգիստ պէտք է կատարվի հանգուցեալի նախկին հայ աշակերտների ու աշակերտուհիների նախաձեռնութեամբ։

Հանգուցեալ դիրեկտորի մասին չէ, որ պէտք է ասել de mortuis aut nihil aut bene. Նա այն մարդկանցից էր, որոնք իրանց ներկայութեամբ յուսահատներին յոյս են ներշնչում ու դառնացած կեանքին քաղցրութիւն են տալիս։ Նա մի մարմնացած ազնուութիւն, բարութիւն ու ճշմարտութիւն էր։ Ոչ ոք այնպէս իդէալօրէն չէր իրա-

գործում «առանց կրոնի ու ազգի խտրութեան» սկզբունքը, ինչպէս հանգուցեալ Կամենսկին։ Ոչ ոք այստեղ այնքան ջերմ ջատագով չէ եղել բէալական ուսման ուղղութեան, որքան նա. ոչ մի աշակերտ Նրա օրով չէ դժբաղդացել,—ահա Նրա յատկութիւններից ամենից գլխաւորը։—Երէկ ռուսաց եկեղեցում և իգական գիմնազիայում հոգեհանգիստներ կատարեցին Նրա յիշատակին, իսկ նախկին աշակերտները յիսունից աւելի ստորագրութեամբ մի ցաւակցական հեռագիր ուղարկեցին հանգուցեալի այրին Թէոդոսիա, ուր Նա վախճանվեց։

Նաւթի գործը այս բոպէիս կատարեալ ածիւտաժի է նման։ Նաւթի, կերոսինի ու նաւթային մնացորդի գինը չը տեսնված արագութեամբ, ինչպէս ասում են, ժամ ժամի վրա է բարձրանում. միայն նաւերի ֆրախտն է սաստիկ ընկել։ Անցեալ տարի կերոսինը պատուհաս էին համարում՝ պուդը 3—4 կոպէկով առնող չը կար, իսկ այժմ 15 կոպէկով նա զ ե ն ա ն ում ծախելու։ Անցեալ տարի նաւթը դէն էին ածում, կէս կոպէկով աղչում պաղատում էին՝ վերցնող չը կար, հիմա իրար գլուխ են կոտրում, 5½—6 կոպէկով չենդտնում։

Պատճառը հասկանալի է։ Առաջինը, անցեալ տարի բեռնակիր նաւերի տեղափոխութեան ընդունակութիւնը հասնում էր maximum 200 միլիոն պուդի, իսկ այս տարի, չնորհիւ անցեալ տարվայ նոր եկած շոգենաւերին՝ բեռ է հարկաւոր ոչ պակաս քան 260 միլիոն պուդ։ Այդ հրէշաւոր, բեռնածարաւ նաւերին կերակուր է հարկաւոր. ո՞րտեղից գտնել։

Միւս կողմից էլ ամերիկական նաւթի աղբիւրների ցամաքելու պատճառով, ամերիկական կերոսինի ներմուծումը Եւրոպա օր օրի վրա պակասում է, այնպէս որ առանց մրցման՝ շուկան մեր կերոսինին է մնում։

Դեռ փառք Աղլահին, որ Ասադուլաեվի չը տեսնված ֆոնտանը մօտ 40 միլիոն պուդ նաւթ դուրս վիժեց, այլապէս հէնց այս բոպէիս նաւթի գինը հասած կը լինէր 8—9 կոպէկի։

Մինչև այսօր համոզված էին, որ դաշնակցութիւնը, նոր պայմանների հիման վրա, գլուխ եկած բան է, ուստի և մեծ աշխոյժ էր երևում ընդհանրապէս բոլոր «կապված» կերոսինագործների դէմքերի վրա։ Սակայն երէկ լուր տարածվեց, որ նորից դժգոհութիւններ են առաջացել մնդուկների գների վերաբերմամբ։

Այսպէս թէ այնպէս, Բաքուն յիշեցնում է 90-ական թուականը, երբ նաւթի գինը հասել էր 8—9 կոպէկի, և երբ մարդիկ իրանց անգամ դրաւ էին գնում, որպէս զի հողեր ձեռք բերեն ու նաւթի հորեր փորեն, կարծելով որ այդ գները յաւիտենական են... Հիմա էլ հարիւրաւոր նոր վիշկաներ են դրել ու հորեր են փորում։ Տեսնենք սրա վերջը ինչ կը լինի։

Ա. Վ.

ՆԱՄԱԿ ՂԶԼԱՐԻՑ

Ապրիլի 8-ին

Նորերս այստեղի այգետէրերի անունով մի գրութիւն էր ստացվել, եթէ չենք սխալվում, Պետերբուրգից՝ այնտեղ կազմված մի նոր ընկերութիւնից, որ իրան նպատակ է դրել միջնորդել ուր հարկն է և խնդրել, որ գինու վրա «ակցիզ» չը նշանակվի։

Այդ ընկերութիւնը, որի կազմակերպողները, ինչպէս լսեցինք, այգետէր կալուածատէրերն են, կարծիքներ ու ստորագրութիւններ է ժողովում գինեգործութեամբ քիչ շատ յայտնի քաղաքներից և մտադիր է վերջը մի ամփոփ տեղեկագրի հետ միասին խնդիր ներկայացնել երկրագործութեան մինիստրութեան վերոյիշեալ բովանդակութեամբ։

Քաղաքային վարչութեան դահլիճում տեղիս այգետէրերը այդ մասին նիստ ունեցան և մի գրութեամբ Պետերբուրգի ընկերութեանը յայտնեցին իրանց կատարեալ համաձայնութիւնը։ Այդ նիստին, այգետէրերից մի քանիսը յայտնեցին, որ եթէ գինու վրա ակցիզ նշանակվի, իրանցից շատերը գուցէ ակամայ հարկադրված կը լինեն իսպառ թողնել այգեգործութիւնը, որը դեռ ներկայ պայմաններում, երբ գինու վրա ոչ մի հարկ չը կայ, վնասից աւել ոչինչ չէ տալիս։

Ահա երկու շաբաթից աւել է, որ տեղացիք այգիները բաց են անում։ Այստեղ, ինչպէս և ամբողջ Հիւսիսային Կովկասում, խաղողի որթը ձմեռը թաղում են հողի տակ՝ սաստիկ ցրտերից պաշտպանելու համար և գարնանը նորից բացանում։

Անցեալ տարվայ բերքը չը վաճառած՝ այգետէրը ստիպված է այս տարվան անհրաժեշտ ծախսերը հոգալ. իսկ այս ծախսերը այստեղ աւելի, քան որ և է ուրիշ տեղ, շատ են։

Սակայն ինչ կը տայ ապագան, ահա հարցը, որը հէնց այժմեանից անհանգստացնում է այգետէրին։ Դժուար է մանաւանդ չքաւոր այգետէրերի դրութիւնը, որոնք անցեալ տարվայ բերքը չեն վաճառել կամ թէ կիսագնով վաճառել և այժմ մեծ նեղութիւն կրելով պէտք է նոր ծախսերը հոգան։ Ասում են կան այնպիսի այգիներ, որոնց տէրերը չեն կարողանում բանալ՝ զուրկ լինելով ամեն միջոցից։ Այս նեղ դրութիւնից դուրս գալու համար այսպիսիները հրէշաւոր տոկոսներով փողեր են վերցնում կամ թէ աննշան վարձատրութեամբ տարվայ բերքը վաճառում։

Գ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Խանքեանդ, ապրիլի 4-ին

Մեր դպրոցի հին հոգաբարձուների օրով, ումն Ա. Թումանեանց, ցանկանալով նիւթապէս օգնել այստեղի դպրոցին՝ մի ժապաւինեալ մատեան է ստանում հոգաբարձութիւնից Բագու քաղաքում նուէրներ հաւաքելու։ Նրան աջողվում է 240 բուբլի ժողովել։

Հին հոգաբարձուները, երբ հաշիւ պէտք է ներկայացնէին նոր հոգաբարձութեանը, իրանց հաշիւի հետ միասին ներկայացնում են այդ նուիրատուների ժապաւինեալ մատեանը, առարկելով, թէ նշանակված 240 բուբլի նուիրատուութիւններից նոյն իսկ մի կ ո պ է կ չ են ս տ ա ց ել Ա. Թումանեանից։

Այժմ ներկայ հոգաբարձութիւնը մի խնդրագրով դիմել է Վեհափառ կաթողիկոսին, ուղարկելով և նուիրատուների մատեանը, խնդրելով տնօրինել պատշաճը։ Մինչև Ե՞րբ պէտք է փողերի կորուստ տեղի ունենայ։

Ցաւ ի սիրտ տեղեկանում ենք, որ այդ Ա. Թումանեանցը յայտնի տեսակի լրագրութեան մէջ աղնութիւն քարոզողներից մէկն է. բայց ասած է. «Քո աչքի գերանը մի թողնիր, ուրիշի ծեղը պտռիլ»։

Ցաւով ենք, որ գէթ այժմ Ա. Թումանեանցը կը յիշէ իր պարտքը և կը շտապէ վերադարձնել յիշեալ գումարը։

Հին հոգաբարձուների պարտաճանաչութեան վրա խօսել այս դէպքում, աւելորդ է, քանի որ, ինչպէս դէպքից երևում է, մեծ հեռատեսութիւն (?) և հասկացողութիւն են ունեցել դպրոցական գործերում։

***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» ներկայ, 42-րդ համարը բաղկացած է թերթ ու կէսից։

—

Մեզ հաղորդում են Էրզրումից, հաստատ աղբիւրից, հետեեալ լուրը, ապրիլի 3-ից. «Քննիչ յանձնաժողովը շուտով Մուշից ճանապարհ կընկնի դէպի Սասուն։ Սասունի քննութիւնը վերջացնելուց յետոյ յանձնաժողովը կը գնայ Բիթլիս, իսկ Բիթլիսից կը վերադառնայ Էրզրում յունիս ամսին»։

—

Հաստատ աղբիւրից տեղեկանում ենք, որ նորերս Թիւրքաց Հայաստան են գնացել եւրոպական լրագիրների նոր թղթակիցներ։

—

Կ. Պոլսից մեզ գրում են. «Պատրիարք Հօր կողմէ փոխանորդ հայրը Զատկի առթիւ չնորհաւորական այցելութիւններ տուաւ. Ռուսիոյ, Անգլիոյ, Յունաստանի, Ռումանիոյ, Սերպիոյ դեսպաններուն և Պուլկարիոյ գործակատարին»։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի հայոց ինտելիգենցիայի մի շրջանում միտք է յղացել՝ մասնաւոր հանգանակութիւն անել մեր ժողովրդական գրող Ղազարոս Աղայեանի օգտին, որը, ինչպէս արդէն մի անգամ հաղորդեցինք, նիւթական ծանր վիճակի մէջ է գտնվում։ Ցոյս ունենք, որ այդ գովելի ցանկութիւնը համակրութիւն կը գտնի։

—

Պետերբուրգի լրագիրները հաղորդում են, որ Պետերբուրգի գերմանական հիւպատոս Միւլիգ նշանակվում է գերմանական հիւպատոս Թիֆլիսում։

—

Թիւրքաց Հայաստանից, Խնուսից ստացած մի նամակից իմանում ենք, որ Խնուսի գաւառում հայերը շատ յուզված վիճակի մէջ են, և յարաբերութիւնները Թիւրքերի հետ շատ լարված են։

—

Պաշտօնական «Кавказъ» լրագիրը ստացել է հետեեալ հեռագիրը. «Հրատարակված է, որ Սալեանի ս. Ստեփաննոս վանքի վանահայր Մակար եպիսկոպոս Բարխուդարեանց նշանակվում է Շամախու հայ-լուսաւորչական թեմի առաջնորդ, Սմբատեան արքեպիսկոպոսի տեղ, որը, հիւանդութեան պատճառով, արձակվել է պաշտօնից իր խնդիրքի համաձայն։

—

Կ. Պոլսից մեզ գրում են. «Պատրիարք հայրը Զատկի տօնին առթիւ բարեմաղթութեանց հեռագիր մը ուղղեց ամենայն հայոց Հայրապետին։ Նմանապէս չնորհաւորական հեռագիր մը ուղղեց Երուսաղէմի Ցարութիւն պատրիարքին, չնորհաւորելով միանգամայն տօնախմբութիւնը։ Երուսաղէմի Ցարութիւն պատրիարքը հեռագրով պատասխանած է պատրիարք Հօր չնորհաւորութեան»։

—

Մեզ խնդրում են յայտնել, որ ապրիլի 16-ին, կիրակի օր, «Երաժշտական Կրուժոկի» մէջ, երգիչ Վարդիկեան տալու է մի ներկայացում։ Կօնցէրտը բաղկացած է զանազան օպերաների կտորներից, ինչպէս օրինակ, «Գիւղական պատիւ», «Ֆաւորիտուհի» և «Կարմեն»։ Երգիչը մտադիր է դրանից յետոյ Պետերբուրգ գնալ՝ բեմական արհեստը ուսումնասիրելու համար։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Ապրիլի 11-ին, կըլուբի դահլիճում կայացաւ կոյր պիանիստ Տիգրանեանի կօնցերտը։ Համարեա բոլոր տեղերը բռնված էին»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

Կ. Պոլիս, ապրիլի 6-ին

Օրուան ոգևորութիւնը պատրիարքին զատկական ատենաբանութիւնն է, որուն վրա երէկուան նամակով խօսեցայ։ Շնորհաւորութեան եկող ահագին բազմութեան պատրիարքը բացարձակ կերպով յայտարարեց, թէ Հայաստանի տառապանքներուն վախճանը մօտեցած է, դեսպաններուն հետ յարաբերութիւնները շատ լաւ են և լիայոյս է, որ ներքին խնդիրները—այսինքն բարեկարգութեանց հարցը—շուտով կը կարգադրի։

Ժողովուրդը որքան որ ալ շատ մը բաներ լսած էր, բայց և այնպէս առաջին անգամն էր, որ պաշտօնական բերնէ մը այսքան հաւատաւոր յայտարարութիւններ կը լսէր։

Մինչ այս մինչ այն, Թիւրքերը կը շարունակեն ահռելի վրէժխնդրութիւն ընել հայերէն Հայաստանի մէջ։ Ո՛րքան որ աւելի հայ կոտորեն, տառապեցնեն, այնքան աւելի շահ ըրած կը համարուին։ Եւ անիշխանութիւնը, որ կը տիրէ ամբողջ երկրին մէջ, մեծապէս ձեռնտու է Թիւրք պաշտօնատարներուն։ Պատրիարքարանը հասած տեղեկագիրները ահռելի նկարագրութիւններ կը-նեն։

Նախորդ շաբաթ հարստահարութեան 110 տեղեկագիր, անցած շաբաթ ալ 140 տեղեկագիր դրուեցան Կրօնական և Քաղաքական ժողովներու գրասեղանին վրա։ Ամենքն ալ շատ թարմ են։ Իսկ չի ղրկուածներուն, պատրիարքարան չի հասածներուն, անծանօթ մնացածներուն, բանտերու մէջ տրուած չարչարանքներուն թիւ ու համար չի կայ։

Շատ տեղեր սուիններու ուժով հայերը իսլամացնելու կաչխատեն Թիւրքերը. եղելութիւնները բացորոշապէս հաղորդուած են պատրիարքարանին. և ահա Պոլսոյ Թիւրք թերթերը անամօթաբար սկսան պարծանքով հրատարակել հայերու կրօնափոխութիւնը, առանց ըսելու թէ ինչ չարչարանքներու ներքև կատարուած են այդ կրօնափոխութիւնները։

«Կ ր օ ն ա փ ո խ ո ւ թ ի ւ ն. Տէրսիմի Մազկերտ գաւառակին Շուրտ գիւղին մէջ տեղի ունեցած են հետեեալ կրօնափոխութիւնները։

Կիրակոս օղլի Յովհաննէս և իր զաւակները՝ Մարտիրոս և Խաչիկ, իր կինը՝ Խումար, իր հայրը՝ Կարապետ, իր հօրեղբայրը՝ Ասատուր, իր հօրեղբորդի՝ Յովհաննէս Իսլամութիւնը ընդունած ըլլալով, կոչուեցան Մուսթաֆա Հատի, Մէհմէտ Էմին, Հիւսէյին Նաճի, Այիշէ, Ալի Ահմէտ, Հիւսէյին Հիւսնի։

Տէրսիմի Զարսանճաղ գաւառակին Քիլիսա թաղին հայ բնակիչներէն Ապրոնի դուստրը Ժառնալ Իսլամութիւնը ընդունելով կոչուեցաւ Խատիճէ։

Այնթապի հայ կիներէն Ովսաննա, դուստր Մանիկի, Իսլամութիւնը ընդունեց և կոչուեցաւ Խատիճէ։»

Հարստահարիչները կը ջանան որ Եւրոպայի առջև հայերը ներկայացուին իբր խռովայոյզ ժողովուրդ։ Զատկի շաբաթ օրը Երուսաղէմ հայերուն և յոյներուն միջև կռիւ մը ծագած է, և, ահա կառավարութիւնը այդ եղելութիւնը մատը փաթթած է, ցոյց տալու համար թէ հայերը ամեն կողմ խռովութիւն առաջ կը բերեն։ Այդ դէպքերուն վրա Պոլիս Երուսաղէմատուն ալ հեռագիր եկաւ. մեր կողմէ հաղորդուեցաւ դեսպաններուն թէ դարերէ ի վեր Զատկին միշտ հայերու և յոյներու միջև կռիւ կըլլայ Երուսաղէմի մէջ, հետևաբար այս տարուան դէպքն ալ սովորական բան մըն է, որուն բացառիկ կարևորութիւն մը ընծայելու չէ։

Բերայի գերեզմանատան դէպքը կը շարունակէ գրդռում պատճառել Թիւրք շրջանակներու մէջ։ Թիւրքերը չեն կրնար իրենց խելապատակին մէջ սեղմեցնել թէ գիավուրները համարձակին ձեռք վերցնել Թիւրքի մը, մանաւանդ զինուորի մը, եթէ մինչև իսկ այդ Թիւրքը, այդ զինուորը թուրով կուզէ զիրենք սպաննել։ Հայուն իրաւունքը միայն աղաչանք մը ընել է. եթէ Թիւրքը հայուն կեանքը չնորհեց, լաւ. եթէ ոչ, պէտք է մեռնի։ Այս գաղափարը այնքան արմատացած է Թիւրքերու մէջ որ հայուն ինքնապաշտպանութիւնը կը համարեն սրբապիղծ յեղափոխութիւն։

Գերեզմանատան կռուին մէջ բռնուած երեք հայերը դեռ բանտն են։ Թիւրքերէ վիրաւորուած հայեր ալ կան. ասոնք իրենց վախէն տուներնին քաշուած դուրս չեն ելլեր։

***

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

Սամսուն, ապրիլի 7-ին

Լուր հասաւ, որ Սեբաստիայի հայաբնակ գիւղերից հինգ-վեցը Թիւրք խուժանի բարբարոսութեանց ենթարկվեցան։ Այդ գիւղերի միայն չորսի անունը մենք կարողացած ենք իմանալ, այն է Բաթրի, Թոփաճլու, Բաչա, և Ղազ-Մաղարա։ Բընակչաց թուահամարը մեզ անյայտ է առ այժմ։

Սեբաստիոյ գաղիական հիւպատոսը լսելով, այդ գիւղերէն մէկը կերթայ եղելութիւնը քննելու համար։ Նա կը տեսնէ որ Թիւրքերը մեծ փութաջանութիւնով կաչխատէին սպանուածները թաղելու. հիւպատոսը արգելք է շարունակել, մինչև որ Կ. Պոլսից՝ իր տուած հեռագրին պատասխանը ստանայ։ Հանել կուտայ մինչև այն ատեն թաղուածներն ալ, նրանց Թիւրք կը նշանակէ մանրամասնութիւններով միասեղ. ի հարկէ միւս գիւղերն ալ մի և նոյն տեսակ քննութեան ենթարկված են։

Սեբաստիա քաղաքին մէջ էլ մեծ յուզում կայ, այս պատճառաւ ալ շատեր չեն համարձակի գալիս դուրս ելլելու, օրինակ առնելով Թոգատի դէպքից։ Կան այնպիսիներ ալ որ կը համարձակին բանալ իրենց կրպակները, բայց միշտ սարսափը մտքերնուն. շուկան ելլողներ և խանութները բացողներ սովորական ժամերին չեն բանար, առաւօտ ուշ և երեկոյին ժամը մինչ 10 ամեն տեղ կը փակվի։

Մատնիչ Փոթուխեանի սպաննումը և մի ուրիշ մատնիչի վիրաւորումը մեծ տագնապ յառաջացուցած է քաղաքին մէջ։

Սամսոն և շրջակայի գիւղացիները խուռն բազմութեամբ դիմեցին կառավարութեան դուռը. մեծ մասամբ Թիւրք և յոյն էին և փոքրաթիւ հայեր, հաց կամ գործ ստանալու համար։ Շատ սրտաշարժ տեսարան էր. լաց, կոծ, պաղատանք, սպառնալից աղաղակներ կը թնդացնէին կառավարութեան հրապարակը։ Աղքատութեան է մատնված խեղճ ժողովուրդը։

Ս.

ՄԱՏՆՈՒԹԻՒՆ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԽՕՍՔԻ ԴԷՄ

—

Ինչպէս երևում է կ. Պոլսում մինչև այժմ էլ դեռ շարունակում են մատնել, լրտեսութիւն անել, երբ հարկաւոր է ստիպել, որ այս կամ այն լրագիրը լռի որևէ հարցի մասին, կամ այս և այն գործողը չանի որևէ քայլ։

Ահա մի նոր ապացոյց, որ կարդացինք «Հայրենիք» լրագրի մէջ։

«Թղթակցութիւններ Նորէն կը ստանանք Սանասարեան վարժարանի նկատմամբ, բայց այս անգամ քաջութիւն չենք զգար որոշ դիրք մը բռնել հանդէպ այն կարգ մը անձերուն, որոնք կը կատարեն աւելի կամ նուազ ակներև դեր մը։

Եթէ կարելի չէ տակաւին որոշ դատապարտութիւն մը արտասանել ասոր կամ անոր դէմ, սա ճշմարիտ է սակայն, որ դպրոցը եղած է՝ դաշտ մը, որուն վրա աշխատողները սկսած են մէկ մէկու դէմ կասկածանքով նայիլ։»

Լրագիրը պէտք է լռի այս և այն վնասակար երևոյթի մասին զրելու, որովհետև վախենում է որ կը մատնեն. այս և այն գործողը երկիւղ է կրում, սարսափում է երևան հանել իր պաշտօնի կեղտոտութիւնները, որովհետև սարսափում է որ ինքն մատնութեան զոհ կը լինի։ Յաւալի է, չատ ցաւալի։»

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

—

Ամբողջ Եւրոպայում ոչ մի երկրի մամուլ այնքան վատ համբաւ չունի ներկայումս, ինչպէս ֆրանսիական մամուլը։

Երրորդ հանրապետութեան մամուլը ոչ թէ միայն իր կոչման բարձրութեան վրա չէ կանգնած, այլ հասել է մինչև անգամ այնպիսի բարոյական անկման, այնպիսի ստորութեան, որ ներկայումս նրա երեսին ուղղակի շպրտում են այն նախատինքը, թէ նա, ֆրանսիական մամուլը, ամբողջովին, առանց բացառութեան, կաշառված է և ծախում է իրան։

Այդպիսի մի խիստ մեղադրանք արել է նորերս Լօնդոնի «Times» լրագրի հռչակաւոր Պարիզի թղթակից Բլօվիցը, որը տպելով «Times» լրագրի մէջ մի նամակ՝ յայտնում է, թէ Պարիզի բոլոր լրագիրները կաշառվում են և ծախում են իրանց։

Այդպիսի մի ծանր, նախատական վիրաւորանք սաստիկ վէգովեց Պարիզի մամուլի սինդիկատին, որն արտակարգ ժողով գումարեց սենատոր Ադրիան Էբերարի նախագահութեամբ և մի առանձին մասնաժողով ընտրեց Բլօվիցի յայտարարութիւնները լսելու և նրանից ապացոյցներ պահանջելու համար։

Սակայն Բլօվիցը մերժեց այդ հրաւէրը պատճառ բերելով, թէ մասնաժողովի նախագահ ընտրվել է մի անձն, Պօլ-դը-Կասանեակ, որն իր անձնական թշնամին է։ Իր գրութեան մէջ Բլօվիցը ասում է, թէ հասարակական կարծիքը ամենից լաւ կը վճռի, թէ ով է արդար, ով է մեղաւոր։

Տեսնենք Պարիզի մամուլը ինչպէս և ինչ միջոցներով պէտք է սրբի իրանից այդպիսի մի ծանր նախատինք։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Բերլինից «Figaro» լրագրին գրում են, որ Գերմանիայում իբր թէ պետական յեղափոխութիւն է լինելու։ Մտադրութիւն կայ Բէյխստագն արձակել և զրկել Գերմանիան ընդհանուր ձայնատուութեան իրաւունքից։

—«Petit Journal» լրագրի խօսքով, ֆրանսիական ոստիկանութիւնը գտաւ մի դաւադրութիւն հանրապետութեան նախագահի դէմ։ Լօնդոնի մի անարխիստ դիտաւորութիւն ունէր փորձ անել նախագահ Ֆորի կեանքի դէմ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 ապրիլի։ Վօլինի նահանգապետի հաշուի մէջ բացատրված էր, որ դպրոցը ամենադօրեղ միջոցներից մէկն է՝ վերացնելու առանձնացումը Վօլինի նահանգի ազգաբնակութեան մէջ, որովհետև նա ոչ միայն պէտք է առաջնորդէ իր սաներին ամենամատաղ հասակից իսկական ռուսական ուղղութեամբ, այլ և այդ ուղղութիւնը, մանուկների միջոցով, պէտք է բարերար աղեցութիւն գործէ և ծնողների վրա։ Դրա վրա տեղի ունեցաւ բարձրագոյն վճիռ «կատարելապէս ճիշդ է։»

«СВѢТЪ» լրագիրը հաղորդում է. Ստօկհօլմում գումարվում է չվէդական դպրոցների ուսուցիչների համագումար ժողովը, և ժողովի կազմակերպողները հրաւիրեցին նոյնպէս Ֆինլանդիայի չվէդական դպրոցների ուսուցիչներին. բայց Ֆինլանդական գեներալ-նահանգապետը չը թոյլ տուեց նրանց գնալ ժողովին, հրամայելով, որ առհասարակ չվէդական համագումար ժողովներին չը պէտք է գնան ֆինլանդական ներկայացուցիչները։

Երէկ երեկոյեան փակվեց տպագրական գործիչների համագումար ժողովը։

ԲԵՐԼԻՆ, 12 ապրիլի Գերմանիայի մեծ մասում, մանաւանդ Նրա հիւսիս-արևելքում, ձիւնը մեծ վնաս հասցրեց ցանքսերին։ Ամենից չատ վնասվեց աշնանացան հաճարը։

ԼՕՆԴՕՆ, 12 ապրիլի։ «Daily News» լրագիրը կարծում է, որ բրիտանական կառավարութիւնը չի միանայ այն պետութիւնների հետ, որոնք կամենում են Եպօնիայի յաղթութեան արդիւնքները պակասցնել։ Անգլիական մինիստրները աշխատում էին պատերազմի առաջն առնել, բայց այժմ նրանք չեն կարծում, որ բրիտանական շահերը կարող են վնասվել խաղաղութեան պայմաններից։

Տօկիօից հաղորդում են, որ Ռուսաստանի, Գերմանիայի և Ֆրանսիայի դեսպանները առաջադրութիւններ արին խաղաղութեան դաշնագրի այն յօդուածների դէմ, որոնց հիման վրա Եպօնիային պէտք է տրվեն չինական մի քանի երկիրներ։

ԼՕՆԴՕՆ, 13 ապրիլի։ Լուր է պտտում, որ անգլիական այն նաւատորմի հրամանատարը, որը պէտք է ներկայ լինի Կիլի տօնախմբութիւններին, այնտեղ եղող ռուսաց նաւերին հրաւէր կուղարկի այցելել Սպիթէտ։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Ապրիլի 11-ին

Լօնդոնի վրա 10 ֆունտ արժէ . .	93	ր.	20 կ.
Բերլինի վրա 100 մարկ — . .	45	»	50 »
Պարիզի վրա 100 ֆրանկ — . .	36	»	85 »
Ոսկի — — արժէ . .	7	»	43
Մաքսային կուպոններ — . .	148	»	50 »
Արծաթ — — — . .	—	»	— »
Բօրսային դիսկոնտ — . .	5	»	7%
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի .	—	»	— »
— — — — 2-րդ .	—	»	— »
— — — — 3-րդ . .	—	»	— »
4% պետական բէնտա	99	»	— »
5% ոսկեայ բէնտա 1894 թ. . . .	164	»	— »
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	—	»	— »
— — — 2-րդ —	—	»	— »
— — — 3-րդ —	—	»	— »
— — — 4-րդ —	—	»	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	239	»	— »
— — երկրորդ —	226	»	— »
5% պետական երկաթուղ. բէնտս.	101	»	75
4% ներքին փոխառութեան . . .	99	»	— »
4½% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	101⅝	»	— »
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ.			
Գրաւ. թղթ. — — .	210	»	75
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի.	101⅝	»	— »
4½% գրաւական թղթեր կալուած.	—	»	— »
Փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ.	151	»	— »
— — — թղթադ. .	—	»	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները.	101⅞	»	— »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	101	»	50
Օդէսայի — —	100	»	75
Թիֆլիսի — —	99⅝	»	— »
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	101	»	— »
— — Քութայիսի — .	101	»	— »

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
ՐԱՖՖԻ
„ՈՎ ԷՐ ՄԵՂԱՒՈՐ“
Գինն է 20 կոպէկ։
Գումարով գնողներին 20% զիջում։
Վաճառվում է „Կովկասեան“ գրավաճառանոցում—կ. Զաքարեա Գրիգորեանի, և հեղինակի այրի մօտ։

—

Նոյն տեղ և նոյն պայմանով վաճառվում է։

ՐԱՖՖԻ
„ՊԱՐՈՅՐ ՀԱՅԿԱԶՆ“
Գինն է 20 կոպէկ։
Ճանապարհածախսը գնողի վրա է։
(№ 39) 3—5

Լոյս տեսաւ
Ա. ՔԱԼԱՆԹԱՐԻ
ՍԱՍՈՒՆ
Գրքոյկը աշխարհագրական քարտէզով։
Գինն է 20 կոպէկ։
Վաճառվում է „Մշակի“ խմբագրատանը և կենտրոնական գրավաճառանոցում։
(№ 39) 2—10

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ
ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։
Դ. Դ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
ԿԻՆ բժիշկ Ա. Ի. ՍՕՐՕԿԻՆԱ-ՇՁԵՐԲԻՆԻՆԱ—10—11 ժ. կանանց և ներքին հ.
Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ։
Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների հ. ներքին և մարթի հ.
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Ա. Գ. ԳՈՒՐԿՕ քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խիպ, արեան, կաթի և այլն։
Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ։ (№ 72)

Մեծ Արժանաւորութեան
ՀՈՏԱՒԷՏ ԶՐԵՐ
„Պարսկական Եաստման“
Ծաղկահոտ Օ-դէ-կոլոն
„Պարսկական Եաստման“
Հոտաւէտ Ջրեր „Պարսկական Եաստման“
Սապոն „Պարսկական Եաստման“
Պօմադա „Պարսկական Եաստման“
Ընկերութիւն
ԲՐՕԿԱՐ ԵՒ ԸՆԿ.
Պրէյս-կուրանտը ձրի։
(ամ. 1) 10—12

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ
1) «ԷՎԷԼԻՆԱ», էտիւդ, գինն, է . . 50 կոպ.
2) «ԱՑՍՏԵՂ ԵՒ ԱՑՆՏԵՂ», . . . 10 »
3) «ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖ. ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ» . . . . 25 »
4) Նոյնը գերմաներէն լեզուով . . 25 »
5) «DIE HUNGERSNOTH IN TURKISCHE ARMENIEN». . . . . 20 »
Վաճառվում է «Մշակի» խմբագրատանը և Թիֆլիսի գրավաճառանոցներում։
(№ 127) 4—10

կենտրոնական գրավաճառանոցում վաճառվում են
ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆՑԻ
1. ԱՑՑ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՑԱՍՏԱՆԻՆ . 60 կ.
2. ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ. 20 կ.
10—10


Чистый Какао Блоккеръ
Առանց վնասակար դեղերի և թունաւոր նիւթերի
Գինը 4 դրամ մէկ կիսոյ։
Գլխաւոր գրասենեակ՝ Մոսկվա, Գրանատնայա փող. № 120. տնտեսական տան մէջ։
Գլխաւոր գրասենեակ՝ Թիֆլիս, Ճէն գրավաճառանոցում։
Գլխաւոր գրասենեակ՝ Բաքու, Գրիբոյեդովի տան մէջ։
Գլխաւոր գրասենեակ՝ Նոր Նախիջևան։
Գլխաւոր գրասենեակ՝ Ռոստով դան։
Գլխաւոր գրասենեակ՝ Ռիգա։
Գլխաւոր գրասենեակ՝ Սարատով։
Գլխաւոր գրասենեակ՝ Սամարա։
Գլխաւոր գրասենեակ՝ Ուֆա։
Գլխաւոր գրասենեակ՝ Ուրալսկ։
Գլխաւոր գրասենեակ՝ Ուստ-Կամենոգորսկ։
Գլխաւոր գրասենեակ՝ Ֆելինի։
Գլխաւոր գրասենեակ՝ Ֆրունզէ։
Գլխաւոր գրասենեակ՝ Ֆեոդոսիա։
Գլխաւոր գրասենեակ՝ Քարքարալինսկ։
Գլխաւոր գրասենեակ՝ Քուրսկ։
Գլխաւոր գրասենեակ՝ Օրենբուրգ։
Գլխաւոր գրասենեակ՝ Օրել։
Գլխաւոր գրասենեակ՝ Պենզա։
Գլխաւոր գրասենեակ՝ Պոլտաւա։
Գլխաւոր գրասենեակ՝ Պսկով։
Գլխաւոր գրասենեակ՝ Սարատով։
Գլխաւոր գրասենեակ՝ Սիմբիրսկ։
Գլխաւոր գրասենեակ՝ Տամբով։
Գլխաւոր գրասենեակ՝ Տաղանրոգ։
Գլխաւոր գրասենեակ՝ Տուլա։
Գլխաւոր գրասենեակ՝ Տրոիցկ։
Գլխաւոր գրասենեակ՝ Տրուբչևսկ։
Գլխաւոր գրասենեակ՝ Վարոնեժ։
Գլխաւոր գրասենեակ՝ Վոլոգդա։
Գլխաւոր գրասենեակ՝ Վոլսկ։
Գլխաւոր գրասենեակ՝ Վորոնեժ։
Գլխաւոր գրասենեակ՝ Վոտկինսկ։
Գլխաւոր գրասենեակ՝ Վոլոկոլամսկ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ 1881 Թ.

„ՌՈՍՍԻԱ“

Ապահովագրական ընկերութեան մէջ

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐ 20,500,000 ՌՈՒԲԼԻ

Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահվում են պետական բանկում։

Օրինակ։ Ընտանիքի հայրը, 34 տարեկան, ապահովագրվում է 5,000 ր., որ պէտք է տրվի կնոջը և երեխաներին անյապաղ մահից յետոյ։ Այդպիսի ապահովագրութեան համար նա վճարում է երեքամսեայ պրէմիա 30 ր. 80 կոպէկ։

Ապահովագրութիւնները ընդունվում են 1000-ից մինչև 100,000 ր. դրամների մէկ անձի կեանքի համար։

Ընկերութիւնը ապահովագրում է առանձին շահաւէտ պայմաններով և արտօնութիւններով հիւանդութեան և աշխատանքին անընդունակ լինելու դէպքում։

Ապահովագրական գումարը տրվում է և մահվան դէպքում տարափոխիկ հիւանդութիւնից, խոլերայից և այլն։

Յունվարի 1-ին 1894 թ. «Ռոսսիա» ընկերութեան մէջ ապահովագրված էին 28,246 անձինք 75,621,010 ռուբլի դրամագլխի։

Ապահովագրողները մասն ունեն Ընկերութեան եկամուտներից։

Ապահովագրողների դիվիդէնտը 1893 թ. համար—12% է։

Ապահովագրութեան համար յայտարարութիւնները ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեփական տուն, № 37), ընկերութեան Թիֆլիսի բաժնում (Сергіевская, д. № 6) և ընկերութեան գործակալութիւնների մէջ կայսրութեան բոլոր քաղաքներում։ (№ 85) 16—20

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1895 Թ.

„ՇԱՒԻՂ“

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

(*Երկրորդ տարի*)

Հրատարակվում է թէհրանում։ „Շաւիղի“ բաժանորդագրին է մէկ թուման, կէս տարվանը վեց ղրան։ Արտասահմանում՝ 3 ռուբլի կամ 8 ֆրանկ. կէս տարվանը 2 ր. կամ 4 ֆրանկ։

Արտասահմանից դրամական ծրարները կարող են ուղարկել հետևեալ հասցէով. Черезъ Баку, Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ, пер. А. Бекъ-Назарову. *Իսկ նամակներ և թղթակցութիւններ հետևեալ հասցէով.* Téhéran, Rédaction „SCHAVIGH“.

Թիֆլիսում „Շաւիղին“ բաժանորդ գրվել ցանկացողները՝ կարող են դրվել Խոսրով Արզումանեանի գրասենեակում։ 2—2

ԴՊՐՈՑ ԵՒ ՊԱՆՍԻՈՆ

Վ. Ի. ՏԷՐ-ՅՈՎՍԷՓԵԱՆԻ

(*Սօլօլակ, Սալօվայա, փողոց, № 46*)

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

(№ 37) 4—6



ՄԻԶՈՑ **ԽԱՐԲՈՒԽԻ** ԴԷՄ

բժշկական դեպարտամենտից թոյլատրված

ՕԼՖԱԿՏՈՐԻՈՒՄ ՆՈՒԴԻԼԻՆ

Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿՈՒ

Ծախվում է 40 կոպէկով

Դեղագործական ապրանքների վաճառման կովկասեան ընկերութեան մէջ՝ Թիֆլիսում։ (№ 22) 12—30

ԿԱԿԱՕ ԲԼՕՕԿԷՐ

ՍՆՆԴԱՐԱՐ ԽՄԻԶՔ (*գլխաւոր պահեստը Ռուսաստանի համար „ԵԱՎԱ“ ֆիրմայի մէջ.* (С.-Петербургъ, Большая Морская, 38).

Ծախվում է կօլօնիալ և դեղային ապրանքների բոլոր լաւ մագազիններում $^1/_1$, $^1/_2$, $^1/_4$ *և* $^1/_8$ *կիլոգրամանոց թիթեղեայ տուփերի մէջ։*

(GRAND PRIX) *Բարձրագոյն պարգև Անտվերպէնի համաշխարհային ցուցահանդիսում 1894 թ.։* (№ 151) 22—50

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ

ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԵՐԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

ԳԻՆԸ 20 ԿՈՊԷԿ

Թիֆլիսում վաճառվում է „Մշակի“ խմբագրատանը, նոյնպէս և Դվորցովայա փողոցի վրա հետևեալ խանութներում՝ Եփրեմ Ծատուրեանի լամպաների մագազինում և Տէր-Յովսէփեանի Ծխախոտի խանութում։ (№ 144)

ՀԵՄԵՑԿԱՅԱ ԳՈՍՏԻՆՆԻՑԱ

HOTEL NIEMIECKI, „ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՑ“ *գտնվում է* **ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ**, *քաղաքի կենտրոնում, նորից վերաշինված, ունի 90 կահաւորված նոմէրներ, որոնց սարք ու կարգը ամենալաւ արտասահմանեան հիւրանոցների սենեակներին է նման։ Նոմէրների գինը 50 կոպէկից մինչև 3 ռուբլի օրական, անկողնով և ծառայով։ Հիւրանոցում կայ ընթերցարան-գրադարան, որտեղ ստացվում են հայերէն „Մշակ“ և „Նոր-Դար“ լրագիրները, հիւրերի համար անվարձ։ Կայ բէստօրան, տելեֆոն, քաղցրեղէնների խանութ, լրագիրներ։*

Հիւրանոցի մէջ գտնվում են բոլոր երկաթուղային կայարաններում։

(№ 21) 125—130 (2·)

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԻ

31-ն Մարտի 1895

ՊԱՀԱՆՋՔ	Թիֆլիսում	Բագուի և Batումի բաժն.	Ընդամենը
1. Դրամարկղ (առձեռն թղթադրամ)	117,304—86	126,627—18	243,932—04
2. Ընթացիկ հաշիւ Պետական Բանկ. բաժնում.	91,009—20	290,508—75	381,517—95
3. Զեղչ. (Disconto) մուրհ. երկու ստորագրութ.	3,096,922—01	1,045,102—52	4,142,024—53
4. Զեղչ. մուրհ. մի ստոր. ապահ. տոկոս. թղթ.	164,501—99	— —	164,501—99
5. Զեղչումն տոկոսաբեր թղթ., կտրօն. և այլն.	54,910—79	3,907—30	58,818—09
6. Փոխառութիւն գրաւականով՝			
ա) Պետութիւնից ապահ. տոկոսաբ. թղթերի.	1,615,195—01	588,232—74	2,203,427—75
բ) » ոչ ապահ. » »	223,100 —	9,265 —	232,365 —
գ) ապրանքների	7,951 —	520,796—14	528,747—14
դ) Ոսկւոյ և արծաթի	— —	21,368—92	21,368—92
7. Բանկի պատկանեալ տոկոսաբեր թղթեր.	701,638—74	64,915—89	766,554—63
8. Ոսկի և արտասահմանի փոխանակագրեր.	317,498—36	46,705—67	364,204—03
9. Տոկոսաբեր թղթեր պահեստի դրամագլխի	236,196—12	— —	236,196—12
10. Թղթակիցներ՝			
ա) Նոցա հաշիւը (Loro)	2,354,823 —	— —	2,354,823 —
բ) Բանկի հաշիւը (Nostro)	4,558,276—52	— —	4,558,276—52
11. Բաժինների հաշիւը կենտր. վարչ. հետ	1,377,406—71	— —	1,377,406—71
Կենտրոնական վարչութեան հաշիւը բաժինների հետ	— —	1,504,916—74	1,504,916—74
12. Գնումն և վաճառ. արժեթղթ ըստ յանձնար.	51,000 —	— —	51,000 —
13. Պայմանաժամն անցուցած փոխառութիւն.	27,505 —	16,500 —	44,005 —
14. Բողոքված մուրհակներ	3,275 —	— —	3,275 —
15. Ընթացիկ ծախսեր	14,873—98	9,712—77	24,586—75
16. Կահկարասիք և սկզբնական ծախսեր	3,081—56	2,681—96	5,763—52
17. Յետ ստացուելիք ծախսեր	10,484—84	7,291—73	17,766—57
18. Անշարժ կալուածք	— —	49,195—15	49,195—15
Ր. Ա.	15,026,954—69	4,307,728—46	19,334,683—15

ՊԱՐՏՔ	Թիֆլիսում	Բագուի և Batումի բաժն.	Ընդամենը
1. Հիմնական դրամագլուխ	1,000,000 —	— —	1,000,000 —
2. Պահեստի դրամագլուխ	236,232—23	— —	236,232—23
3. Դրամագլուխ զեղչման անշարժ կալուածքի.	— —	1,229—88	1,229—88
4. Դրամական ամանաներ՝			
ա) Պայմանաժամով	3,919,196 —	773,834 —	4,693,030 —
բ) ց'Պահանջ	250,940 —	102,294 —	353,234 —
գ) Ընթացիկ հաշուով հասարակ.	910,667—66	1,569,042 23	2,479,709 89
դ) » » պայմանաւոր.	— —	358,617 92	358,617—92
5. Մասնաւոր հաշիւ պետ. բանկայի Թիֆլ. բաժն. ապահովված մուրհակներով	— —	— —	— —
6. Վերադեղչումն մուրհակների պետական բանկի Թիֆլիսի բաժնի	— —	— —	— —
7. Թղթակիցներ՝			
ա) Նոցա հաշիւը (Loro)	2,580,721—86	— —	2,580,721 86
բ) Բանկի հաշիւը (Nostro)	4,257,020—70	— —	4,257,020—70
8. Բաժինների հաշիւը կենտ. վարչութ. հետ.	— —	1,295,656—37	1,295,656 37
Կենտրոն. վարչութ. հաշիւը բաժին. հետ.	1,432,716—15	— —	1,432,716—15
9. Բանկի բաժնետոմսերու անվճար կտրօնների բաշխը	5,263—65	— —	5,263—65
10. Զը վճարուած տոկոսներ, ամանաների, ընթացիկ հաշիւների և այլ գործողութեանց	89,726—83	21,940—90	111,667—73
11. Ստացուած տոկոսներ և յանձնարարականներ	89,939 —	41,218—53	131,157—53
12. Փոխանցիկ գումարներ	78,788—83	69,832—72	148,621—55
13. Արդիւնք 1894 թ.	175,741—78	74,061—91	249,803—69
Ր. Ա.	15,026,954—69	4,307,728—46	19,334,683—15

Дозволено цензурою, Тифлисъ, 14 Апрѣля 1895 г.

Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.